# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 13 (1363) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 19, 2008
VOLUME 28, NO. 13 (1363) SATURDAY, APRIL 19, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ՄԷԿ ՁԵՌՔԻՆ ՁԻԹԵՆԵԱՑ ՃԻՒՂ, ՄԻՒՍԻՆ՝ ՀՐԱՁԷՆ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

*Ապրիլ 9-ին, Ալ. Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալէի ազգային ակադեմիայի ակադեմական թատրոնի շէնքին մէջ, 58 երկիրներու եւ 12 միջազգային կառոյցներու ներկայացուցիչներու, Արցախի նախագահ Բակօ Սահակեանի, ինչպէս նաեւ հայրենի իշխանամէտ քաղաքական դէմքերու եւ լրատուական շրջանակներու ներկայութեան, սահմանադրութեան մայր օրինակի եւ Վեհամայր Աւետարանի վրայ իր երդումը կատարեց, Հայաստանի Հանրապետութեան, այսպէս կոչուած, նորընտիր նախագահ՝ Սերժ Սարգսեան: Մինչ ապահովական խիստ հսկողութեան պայմաններու ներքեւ տեղի կ'ունենար հաւատարմութեան այս հանդիսաւոր արարողութիւնը, քիչ անդին, Երեւանի Միասնիկեանի արձանի մօտ, Ազատութեան Հրապարակի վրայ Մարտ 1-ին մարտիրոսացած եղեռական զոհերու քառասունքի յիշատակութիւնը տեղի կ'ունենար, բազմահարիւր սգաւոր հայորդիներու խունկ ու մոմավարութեամբ...*

*Երդման արարողութենէն ետք, իբրեւ նոր, երդուեալ նախագահ, իր արտասանած ճառին մէջ, Պրն. Սերժ Սարգսեան, հանգամանօրէն ուրուագծեց իր յանձնառու, ... պիտի ուզէի ըսել, առաւելաբար զգացական բնոյթի , բարոյախօսական ծրագիրը, որ հիմնականին մէջ, պիտի դառնար պարզապէս սրտառուչ - այլապէս, զուրկ գործնական յանձնառութիւններէ - կոչ մը՝ ուղղուած բոլորին, «...մեր ժողովուրդի միջեւ* **չպէտք է անջրպետներ** *ստեղծենք,* **չպէտք է անհաղորդ լինենք** *միմիանց մտահոգութեան ու ցաւի նկատմամբ: Եթէ անգամ մեր միջեւ չհասկացուածութեան պատ կայ, կոչ եմ անում,* **եկէք քանդենք այդ պատը***:» (Ընդգծումները մեր կողմէ, Տ.Ա. Գ.)*

*Այս պատգամը իր մէջ կը խտացնէ մեր հայրենի վերջին տասնամեայ ազգային ողբերգութիւններու եղեռնական հիմնապատճառները:*

*Նախ ճշդում մը կատարելով, դիտել տանք անմիջապէս, թէ մենք հաւատացողը չենք, որ մեր ժողովուրդին միջեւ անհասկացողութեան* **անջրպետներ** *կան: Ծով հոգերով բեռնաւորուած մեր ժողովուրդը հայրենի, աւելի քան երբեք միասնական ու հոգեկից է: Այդ* **անջրպետները** *ստեղծուեցան ու հիմնաւորուեցան հայրենի իշխանութիւններու կողմէ, իրենց եւ ժողովուրդին միջեւ: Անցնող տաս-*

Շար.ը էջ 6

## ԵԽԽՎ-Ի ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ ԽԻՍՏ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ

*Ապրիլ 14-ին Ստրասբուրգի մէջ սկսաւ Եւրախորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽԽՎ) գարնանային նստաշրջանը, որուն ընթացքին ԵԽԽՎ-ի դիտորդական առաքելութեան ղեկավար Ճոն Պրեսկոտի ներկայացուց Փետրուար 19-ի Հայաստանի մէջ տեղի ունեցած նախագահական ընտրութիւններու վերաբերեալ վերջնական զեկոյցը:*

*Պրեսկոտի ներկայացուած զեկոյցին մէջ նշուած էր որ, ընտրութիւնները հիմնականին մէջ անցած են Եւրախորհուրդի չափանիշերուն համապատասխան, իշխանութիւնները բարելաւած են օրէնսդրութիւնը, սակայն բաւարար քաղաքական կամք չցուցաբերելու հետեւանքով անոնք չեն իրագործուած»:*

*Զեկոյցին յաջորդած քննարկումներու ընթացքին վեհաժողովի շարք մը պատգամաւորներ հանդէս եկան հայաստանեան ընտրութիւններու քննադատութեամբ:*

*Շուէտ պատգամաւոր Մարիետա Դե Պուրբէյ-Լունդին, որ նաեւ Եւրախորհուրդի դիտորդական առաքելութեան անդամ էր, պատմեց այն ընտրախախտումներու մասին, որոնց ականատես եղած է. - «Յատկապէս ձայներու հաշուարկի ժամանակ այնտեղ, ուրտեղ ես ներկայ էի, իրավիճակը ահաւոր էր: Ամենասարսափելին այն էր, որ ընտրատեղամասի ղեկավարը տեղեակ էր, որ, օրինակ, Լեւոն Տէր-Պետրոսեանի օգտին տրուած ձայները կը դրուին այն ժամանակ դեռ վարչապետ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանի օգտին: Անոնք կը փորձէին թաքցնել այն, ինչ կ'ընէին, բայց, այնուամենայնիւ, ես կը տեսնէի, թէ ինչ կը կատարուէր»:*



Արխիւային նկար ԵԽԽՎ-ի ժողովներու դահլիճէն

Շար.ը էջ 4

## ԸՍՏ ՔՈՆՏՈԼԻԶԱ ՌԱՅՍԻ, ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ

*Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղար Քոնտոլիզա Ռայս Երեքշաբթի, Ապրիլ 15-ին կոչ ըրաւ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարութեան, ցուցաբերելու քաղաքական կամք՝ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելու նպատակով:*

*Ռայս յայտնեց որ, ղարաբաղի տագնապը կը վնասէ երկու երկիրներու շահերուն եւ փոքր քաղաքական կամքով հարցը կրնայ արագօրէն լուծուիլ:*

*Ելոյթ ունենալով Թուրք Ամերիկեան Խորհուրդին առջեւ, Միացեալ Նահանգներու արտաքին յարաբերութեանց ղեկավարը յայտարարեց որ, Մինսկի Խումբը բազմաթիւ առիթներով շատ մօտեցած էր համաձայնութիւն ապահովելու եւ ժամանակը եկած է, որպէսզի կողմերը կատարեն դժուար ընտրութիւնները, որոնք անհրաժեշտ են հարցի հակամարտութեան վերջնական լուծման համար:*

*Պետական Քարտուղարութիւնը նաեւ հրապարակեց փաստաթուղթ մը, ուր կ'ըսուի թէ Միացեալ Նահանգները չի ճանչնար Լեռնային Ղարաբաղը որպէս անկախ երկիր եւ կը պաշտպանէ Ատրպէյճանի հողային ամբողջականութիւնը:*

## ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԱՐԳԻԼՈՒԵՑԱՒ

*Ապրիլ 11-ին ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը «Անի Պլազա» հիւրանոցէն ներս ծրագրած էր կազմակերպել քոնֆերանս՝ նուիրուած հայ-թրքական յարաբերութիւններուն: Սակայն վերջին պահուն հիւրանոցի պատասխանատուները տեղեկացուցած են որ չեն կրնար սրահը տրամադրել:*

*«Մեծ եղաւ մեր զարմանքն ու վրդովմունքը, որ հերթական անգամ, վերջին րոպէներին մեզ զանգահարեցին եւ մերժեցին դահլիճ տրամադրել, այս անգամ էլ «Անի-Պլազա» հիւրանոցից էր»,- ըսուած էր Հնչակեան երիտասարդական միութեան այս առթիւ հրապարակած հաղորդագրութեան մէջ: Մարտի 28-ին միութեան մէկ այլ ձեռնարկը մերժուած էր «Կոնգրէս» հիւրանոցի կողմէ:*

*«Ա1+»-ը «Անի Պլազա» հիւրանոցէն փորձած է ճշդել վերջին պահուն դահլիճ չտրամադրելու պատճառը: Հիւրանոցի մէկ աշխատակիցը ըսած է, թէ չեն կրնար ըսել, թէ ինչո՞ւ, սակայն առաւօտեան իրենցմէ պահանջած են, որ հանեն բոլոր միջոցառումները: Իսկ թէ ո՞վ է պահանջողը, վերջիները չեն ուզած ըսել:*

*«Սոյն ամսի 24-ին լրանում է Հայոց Մեծ Եղեռնի 93-րդ տարելիցը եւ մենք՝ որպէս եղեռնին վերապրած կուսակցութեան երիտասարդական-ուսանողական միութեան անդամներ, ցանկանում էինք հաւաքել ամբողջ երիտասարդական դաշտը, ծաւալել քննարկում, լսել մարդկանց, ովքեր բաւական մասնագիտացել են այս ոլորտում: Մենք հրաւիրել էինք ոչ միայն ընդդիմադիր կուսակցութիւնների ուսանողական-երիտասարդական միութիւնների ներկայացուցիչներին, այլ նաեւ ՀՅԴ-ի, ՀՀԿ-ի եւ ՕԵԿ-ի երիտասարդական կազմակերպութիւններին: Նպատակը մէկն էր՝ յայտարարել, որ հայ երիտասարդներս միակամ ենք ցեղասպանութեան խնդրում, որ պահանջատէր ենք, որ չենք մոռանայ այն, ինչ եղել է,- ըսուած էր միութեան հաղորդագրութեան մէջ:*

*Եզրափակելով ըսուած էր,- «Հասկանալով այս ամէնի տակ թաքնուած խոր ենթատեքստը, մենք դատապարտում ենք պատկան մարմինների այսօրինակ գործելաոճը եւ փաստում, որ ամբողջ աշխարհում Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող խորհրդաժողով մինչ այժմ չէր կարելի անցկացնել միայն Թուրքիայում եւ Ատրպէյճանում: Այսօր արդէն կարելի է փաստել, որ նմանատիպ խորհրդաժողով չի կարելի անցկացնել նաեւ Հայաստանում: Ուշքի եկէք, պարոնայք, միթէ սա է ձեր գործելաոճը»:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՊԵՏՈՒԹԻՒՆՆ Է ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ

*Մարտի 1-ին Ռոբերդ Քոչարեանը ուզում էր ապացուցել, որ Հայաստանում տղամարդ չկայ: Նա սրանում թերեւս համոզուած էր. Հայաստանում բոլորը ահուդողով են վերաբերւում, այսպէս կոչուած, օլիգարխներին, իսկ վերջիններս էլ իր կօշիկներն են լպծտում, հետեւութիւնը ինքն է բախում դռները: Եւ ահա, Մարտի 1-ին Քոչարեանը որոշեց նախագահականից, իր կարծիքով, առժամանակ հեռանալուց առաջ մի լաւ ծեծ տալ Ազատութեան հրապարակում «Թատրոն խաղացողներին», որպեսզի բոլորին ցոյց տայ, որ Հայաստանում տղամարդ չկայ: Ու Մարտի 1-ը իսկապէս հայաստանցիների առաջ այս բարոյական երկընտրանքն էր դնում: Ի՞նչ կը լինէր, եթէ մարդիկ Երեւանի քաղաքապետարանի մօտից գլխապատառ փախչէին. Քոչարեանը, բերանը ծռած ուսերով ծիծաղելով, պիտի «ափսոսանքով» արձանագրէր. ասում էի, չէ՞, Հայաստանում տղամարդ չկայ: Իսկ այդ ժամանակ հաստ մուսկուլներով օլիգարխները պիտի կռիւ անէին, թէ ով պիտի հանի Ռոբի կօշիկները, եւ իրար պիտի խփէին նրա չստերը բերելու իրաւունքի համար: Բայց Մարտի 1-ը չհաստատեց Քոչարեանի դիագնոզը, ու նա սփրթնած դէմքով սկսեց խօսել օրէնքից, օրինականութիւնից, պետութիւնից, պետականութիւնից ու նրա հիմքերից: Իսկ մտքին բոլորովին ուրիշ բան էր. եթէ ինքը երկրի միակ տղամարդը չի, նշանակում է՝ առաջիկայում կարող է լուրջ պրոբլեմներ ունենալ: Եւ չունենալու համար հարկաւոր է բանտերը լցնել... տղամարդկանցով: Քոչարեանը տեղեակ չէ, անշուշտ, որ Հայաստանում տղամարդկանց թիւը չափազանց մեծ է, ու այդ տղամարդիկ առաջիկայում իր հետ խօսելու բան են ունենալու: Այս խօսակցութիւնը, անշուշտ, հնարաւոր է յետաձգել, դրանց պոտենցիալ մասնակիցների մի մասին վերացնել, միւս մասին բանտերը լցնել, միւս մասին բարոյապէս կոտրելու փորձեր անել, բայց խօսակցութիւնը վաղ թէ ուշ տեղի է ունենալու: Սա իմիջիայլոց: Իսկ ընդհանրապէս, զարմանալի է, թէ վերջին շրջանում ինչքան յաճախ է խօսւում պետութեան, պետական շահի, օրինականութեան մասին: Ոմանք Ազատութեան Հրապարակում պայքարի ելած մարդկանց, որոնք Մարտի 1-ին տեղափոխուեցին Ֆրանսիայի դեսպանատան մօտ, փորձում են մեղադրել օրինականութիւնը խախտելու, պետութեան հիմքերն ու կայունութիւնը խախտելու մէջ: Ինչ խօսք, այսպիսի մեղադրանք հնչեցնողների մի մասը չի էլ հասկանում, թէ ինչի մասին է խօսում: Ցանձնարարել են, ասում է: Իրականում, սակայն, այս մեղադրանքների տակ շատ հին կոնցեպտուալ հայեցակարգային բանավէճ է թաքնուած: Այդ բանավէճի իմաստը հետեւեալն է. պետութի՞ւնն է մարդու համար, թէ՞ մարդը՝ պետութեան, օրինականութի՞ւնն է քաղաքացու համար, թէ՞ քաղաքացին՝ օրինականութեան, կայունութի՞ւնը պէտք է ծառայի մարդուն, թէ՞ մարդը՝ կայունութեանը: Եւ իրականում վերջին ամիսների քաղաքական պայքարի հիմքում հենց այս երկընտրանքն էր դրուած: Լեւոն Տէր-Պետրոսեանը կարծեմ Փետրուարի 16-ի հանրահաւաքում մի այսպիսի նախադասութիւն արտասանեց. «Եթէ կ'ուզէք, պետութիւնից էլ բարձր է մարդը եւ նրա ազատութիւնը»: Եւ հենց այս նախադասութեան մէջ էր ամփոփուած Տէր-Պետրոսեանի թիմի կողմից Հայաստանին առաջարկուող գաղափարական այլընտրանքը:*

*Քոչարեանասերժական թիմի պատկերացումները բոլորովին այլ են: Ըստ այդ պատկերացման, պետութիւնը պէտք է լինի կազմակերպուած: Այսինքն՝ մարդը պէտք է տեղաւորուի պետութեան կողմից իր համար կազմակերպուած գործառոյթների շրջանակներում: Իսկ պետութիւնը որոշում է ամէն ինչ. ով պէտք է լինի հարուստ, ով պէտք է լինի աղքատ, ինչ պիտի հնչի եթերում, որ թերթը ինչքան տպաքանակ պիտի ունենայ, ով պէտք է ապրի Երեւանի կենտրոնում, ով պիտի տեղափոխուի ծայրամաս, ով պիտի շաքարաւազ ներկրի, ով՝ բենզին, ով պիտի պատգամաւոր դառնայ, ով՝ քաղաքապետ:*

*Իսկ պետականութիւնը երկրի հարստութիւնը իրենց ձեռքը կենտրոնացրած 40 ընտանիքների կազմակերպութիւնն է՝ Քոչարեանների եւ Սարգսեանների ընտանիքների գլխաւորութեամբ: Օրինականութիւնը նրա համար է, որ պաշտպանի այդ ընտանիքների անվտանգութիւնը, կայունութիւնը նրա համար է, որ պահպանի վերը նշուած համակարգը: Քաղաքացիները նրա համար են, որ սպասարկեն այդ համակարգին կամ արտասահմանից տրանսֆերներ ստանան ու սպառեն համակարգի կողմից ներկրուած շաքարաւազը, բենզինը եւ այլն, եւ այսպէս շարունակ: Իսկ անհնազանդ քաղաքացիները կը պատժուեն լրիւ օրինական հիմունքներով: Այս համակարգի գիտական նկարագրութիւնը արդէն իսկ արել է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ աւազակապետութեանը եւ մոնղոլ-թաթարական խանական համակարգին վերաբերող իր յայտնի ելոյթներում: Այնպէս որ, այս համակարգերի հետագայ պարզաբանման կարիքը չկայ:*

*Եւ ուրեմն՝ ո՞րն է այս ամէնի եզրակացութիւնը: Իսկ եզրակացութիւնը շատ պարզ է ու միանշանակ:*

*Թքել է պէտք այն օրինականութեան վրայ, որը կոչուած չէ պաշտպանել քաղաքացուն, անհատին, նրա իրաւունքներն ու արժանապատուութիւնը: Թքել է պէտք այն օրինականութեան վրայ, որը մարդասպանին ազատութիւն է շնորհում, իսկ ազգային հերոսին ծաղրուծանակի ենթարկում: Թքած է պէտք ունենալ այն օրէնքի վրայ, որը գործում է կախուած այն բանից, թէ դու ինչքանով ես հնազանդ աւազակապետական զոյգին:*

*Թքել է պէտք այն կայունութեան վրայ, որը չի ծառայում քաղաքացուն, չի ծառայում նրա օբիեկտիւ ընդունակութիւնների բացայայտմանը, չի նպաստում նրա ստեղծագործական ձգտումների իրականացմանը: Թքել է պէտք այն կայունութեան վրայ, որի նպատակը թալանչիների տիրապետութեան ստատուս-քվոյի պահպանումն է, քաղաքացու, մարդու բարոյական հարստահարման ու նուաստացման իրավիճակի յաւերժացումը: Թքած է պէտք ունենալ այն պետութեան վրայ, որը հիմնուած չէ իր քաղա-*

*Շար.ը էջ 4*

# ԿԱՄ ՕՐԷՆՔՈՎ, ԿԱՄ ԶՈՐՈՎ

*Անկեղծ ասած, արդէն սկսել էինք անհանգստանալ՝ հո ոստիկաններին բան-ման չի՞ պատահել: Մի քանի օր շարունակ Երեւանի կենտրոնում խայտառակ վիճակ էր. մարդիկ հանգիստ զբօսնում էին Հիւսիսային պողոտայում, եւ որեւէ մէկը նրանց չէր ձերբակալում: Բայց երէկ ամէն ինչ իր տեղն ընկաւ:*

*Քանի որ Սերժիկ Ազատիչը երկու օր առաջ յայտարարել էր, թէ ինքը «բոլորի նախագահն է», երէկ քաղաքի տարբեր թաղամասերում այդ «բոլորից» մի 10-15 հոգու ձերբակալեցին: Ըստ էութեան, այս օպերացիան կարելի է անուանել «Մեր պատասխանը Չեմբեռլենին»: Բանն այն է, որ նախօրէին Խաւիեր Սոլանան ՀՀ իշխանութիւններին կոչ էր արել ազատ արձակել բոլոր ձերբակալուածներին, եւ Սերժ Սարգսեանը փաստօրէն այս ձեւով է պատասխանում: Մեր մէջ ասած, Խաւիեր Սոլանային (եւ միջազգային կառոյցների միւս ներկայացուցիչներին) «հասնում է»: Նրանք իրենց դոնդողային կեցուածքով աւելի լուրջ վերաբերմունքի արժանի չեն: Բայց նրանք մեզ առանձնապէս չեն հետաքրքրում, մեզ Հայաստանի վիճակն է յուզում:*

*Խաղաղ բնակչութեան նկատմամբ արդէն մօտ քսան օր շարունակուող ոստիկանական «ընթացիկ տեռորը» մի հետաքրքիր առանձնայատկութիւն ունի. որպէս կանոն, ամենաբռնի գործողութիւններին շարքային ոստիկանները չեն մասնակցում: Այդ գործողութիւնները կամ անձամբ իրականացնում են բարձրաստիճան ոստիկանները («Բազազը», «Խլուրդը» կամ մէկ ուրիշը՝ էական չէ), կամ ծեծուջարդին անպայման մասնակցում են «քաղաքացիական հագուստով» ինչ-որ մարդիկ: Թէ ինչու շարքային ոստիկաններն այդ ամէնին չեն մասնակցում՝ հասկանալի է: Նրանք, բնականաբար, հրաժարւում են. «կողմնակի եկամուտ» չունեն, հագիւ աշխատավարձով գոյատեւում են, եթէ աշխատանքից զրկուեն էլ՝ մեծ կորուստ չի լինի, ուրեմն յանուն ինչի՞ պիտի «աչքի ընկնեն»: Քաղաքացիական հագուստով անյայտ ծեծողների պարագան այլ է: Նրանք կամ ոստիկանութեան եւ ԱԱԾ-ի «օպերներ» են (այսինքն՝ «կողքից» փող աշխատողներ), կամ օլիգարխների թիկնապահներ: Երկու դէպքում էլ կորցնելու բան ունեն, երկու դէպքում էլ պրոբլեմներ ունեն օրէնքի հետ, հետեւաբար՝ անձնապէս շահագրգռուած են, որ այս ռեժիմը շարունակի գոյատեւել:*

*Հիմա անդրադառնանք բարձրաստիճան ոստիկաններին: Եթէ փոխգնդապետի կամ գնդապետի ուսադիրներով ոստիկանը քացիներով ծեծում է իր մօր տարիքի կնոջը կամ 14 տարեկան երեխային, այստեղ երկու կարծիք լինել չի կարող. այդ մարդը անասուն է: Ցաւալին այն է սակայն, որ այդ «անասնացման գործընթացը» նաեւ տրամաբանական հիմնաւորում ունի: Աւելի ճիշդ՝ այդ մարդկանց թւում է, թէ իրենք շատ ճիշդ հաշուարկել են ամէն ինչ, եւ իրենց ոչ մի դէպքում ոչինչ չի սպառնում: Այս «հաշուարկը» հիմնուած է երկու թէզի վրայ: 1. «Պէտք է ամէն կերպ աչքի ընկնել, որպէսզի Սերժ Ազատիչը մեզ նկատի: Թող իմանայ, որ մենք ենք իր համար դոշ տալիս: Նազարեան Ներսիկն ու Աֆեան Սաշիկն աչքի ընկան ու պաշտօնի բարձրացում ստացան, հիմա մեր հերթն է: Ժամանակներն այնպիսին են, որ ինչքան ժողովուրդը մեզ հայհոյի, ուրեմն այնքան հաւատարիմ ենք ռեժիմին»: 2. «Մենք վախենալու բան չունենք: Եթէ նոյնիսկ ռեժիմը պարտուի ու նոր իշխանութիւններ գան, մեզ դժուար թէ ձեռք տան: Ամէն իշխանութիւն էլ կը ցանկանայ մեզ նման «կադրեր» ունենալ, որ ցանկացած հրաման կատարենք»:*

*Պրոբլեմն ընդամէնը այն է, որ երկու թէզերն էլ սխալ են: Առաջին. Սերժ Սարգսեանն այս «գնդապետներին» ոչ թէ որպէս ոստիկաններ է ընկալում, այլ որպէս անձնական «ախռաննիկ»: Իսկ «ախռաննիկների» պաշտօնը չեն բարձրացնում: Նրանց ընդամէնը կերակրում են եւ սխալի դէպքում պատժում: Ընդ որում, ամենեւին էլ ոչ «օրէնքի շրջանակներում», որովհետեւ եթէ քո հիմնական գործը հակաօրինական հրամաններ կատարելն է, իրաւունք չունես ակնկալել, որ քո նկատմամբ օրէնքով կը վարուեն: Երկրորդ՝ ՀՀ յաջորդ իշխանութիւններին այս կարգի ծառայողներ պէտք չեն լինելու շատ պարզ պատճառով՝ յաջորդ իշխանութիւններին ոչ թէ ռեժիմի «ախռաննիկներ» են պէտք լինելու, այլ իրաւապահ մարմիններ: Իսկ մէկ անգամ յանցանք գործածն այլեւս երբեք օրէնք պաշտպանել չի կարող: Ինչպէ՞ս պիտի յանցաւորութեան դէմ պայքարի նա, ով ոչ միայն ինքն է յանցաւոր խմբաւորման ծառայել, այլեւ նոյն այդ յանցաշխարհի կանոններով համարւում է «կոտրուած» (աւելի կոպիտ բառ չօգտագործենք):*

*Այնպէս որ, իրականութիւնը ճիշդ հակառակն է: Ինչպէս էլ զարգանան իրադարձութիւնները, ամէն դէպքում առաջինը հենց այս «աչքի ընկած» ոստիկանապետերն են պատժուելու:*

***ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ***
***«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»***

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԽՕՍՔԻ ԵՒ ԳՈՐԾԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Սերժ Սարգսեանի խօսքերը հակասում են իր գործունէութեանը. խօսքի եւ գործի տարբերութիւններն այսօր ընդգծեցին ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորները: Ստեփան Սաֆարեանը տեղեկացրեց, որ այսօր վաղ առաւօտից սկսել են ձերբակալութիւններ. արդէն 4 հոգու բառացիօրէն անկողիններից հանել, տարել են բաժիններ՝ հանրահաւաքներին մասնակցելու համար, մեկին էլ երէկ են տարել՝ Գյոզլթեան ազգանունով՝ սգոյ միջոցառմանը մասնակցելու համար: Ստեփան Սաֆարեանը յոյս ունի, որ նոր կառավարութեան կազմում չեն լինի այսօրուայ ուժային նախարարները, իսկ Մարտի 1-ին մարդկանց վրայ կրակ բացած մարդիկ պատասխանատուութեան կ'ենթարկուեն: Ի դէպ, պատասխանատուութեան ենթակայ անձանց թւում Ստեփան Սաֆարեանը նշեց Իրեբունու եւ կենտրոնի ոստիկանապետերի անունները:*

*«Ժառանգութեան» պատգամաւորները նկատեցին նաեւ, թէ ԼՂՀ կարգաւորման մասին այն յայտարարութիւնը, որ դրուած է ԱԺ-ի շրջանառութեան մէջ, իրականում չի բխում այսօրուայ իրավիճակից՝ նոյն յայտարարութիւնը կարելի էր անել նաեւ 6-7 տարի առաջ, բացի այդ, յայտարարութիւնը չի արտայայտում ԱԺ-ի դիրքորոշումն ու մօտեցումը խնդրի կարգաւորմանը: «Ժառանգութեան» պատգամաւորները արձանագրեցին, որ մինչ օրս չեն լսել ԱԺ-ի պահանջը ԼՂՀ-ն կարգաւորման գործընթաց վերադարձնելու մասին: Արմէն Մարտիրոսեանն էլ աւելացրեց, որ այն, ինչի մասին իրենք մտահոգութիւններ էին արտայայտում ու քննադատում էին, այսօր նոյն իշխանութիւնն է քննադատում իշխանութեան վարած քաղաքականութիւնը: Ինչ վերաբերում է ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզայի յայտարարութիւններ «Ժառանգութեան» պատգամաւորները նկատեցին, որ Բրայզային քննադատելու փոխարէն ճիշդ կը լինէր, եթէ աւելի մեծ նախաձեռնողականութիւն ցուցաբերէր: «Ժառանգութիւնը» նաեւ նկատեց, որ աւելի լաւ կը լինէր չընդունել ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած շատ անգամ անհեթեթ առաջարկութիւններ:*

*ԲՀԿ պատգամաւոր, Եւրաինտեգրման յանձնաժողովի նախագահ Աւետ Ադոնցն էլ նկատեց, որ ԱԺ-ը բաւարար չի զբաղուել ղարաբաղեան խնդրի կարգաւորմամբ. աւելին, վերջին անգամ ընդամէնը 2 տարի առաջ է լսումներ կազմակերպուել ԱԺ արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի կողմից. «ԱԺ-ն պէտք է աւելի ակտիվ եւ մշտական օրակարգի քննարկման հարց դարձնի Ղարաբաղի հիմնախնդիրը»,-ասաց Աւետ Ադոնցը, նաեւ քննադատեց միջազգային ատեաններին, որոնք «գնահատական չտուեցին Ատրպէյճանի ագրեսիվ քաղաքականութեանը»: Իսկ ագրեսիվ քաղաքականութիւնը պայմանաւորուած էր նաեւ ներքաղաքական խնդիրներով:*

*Ի դէպ, ԲՀԿ պատգամաւոր Նաիրա Զոհրաբեանից «Ա1+»-ը փորձեց ճշդել, թէ իրենց կուսակցութեան համակիր Գոռ Քլոեանի մահուան հանգամանքներն արդեօ՞ք իրենք պարզել են. Զոհրաբեանը պատասխանեց միայն, որ նա Լեւոն Տէր-Պետրոսեանի համակիրը չի եղել եւ հանրահաւաքներին չի մասնակցել, եւ «պատահաբար է յայտնուել բախումների կիզակէտում»:*

# «ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՈՒԷՐՈՎ»

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Ընդդիմութեան ակտիւիստների նկատմամբ յարուցուած քրէական գործերի դատավարութիւններն ընթանում են քաղաքական պատուէրով եւ դատական գործընթացը ցոյց է տալիս դրանց շինծու լինելը՝ աղաղակող թերութիւններ, օրէնքի խախտումներ, մարդու իրաւունքների մասին էլ չենք խօսում, իսկ «անմեղութեան կանխավարկած» հասկացութեան մասին մեր դատարանները վաղուց մոռացել են»,- Ա1+-ի հետ զրոյցում ասաց ՀԺԿ վարչութեան անդամ Ռուզան Խաչատրեանը:*

*Նա նկատեց, որ դատական պրոցէսների մի մասը ընթանում է արագացուած ընթացակարգով, որովհետեւ կեղծ խոստումներ են տալիս ամբաստանեալներին, որ իբր խիստ չեն վարուի, իսկ քանի որ մարդիկ չեն հաւատում արդարադատութեանն ընդհանրապէս՝ իմանց համոզուել յաջողւում է: Մեր հարցին, թէ ինչով է բացատրում այն հանգամանքը, որ յայտնի քաղաքական գործիչներին, կուսակցութիւնների լիդերների գործերն առայժմ չեն ուղարկում դատարաններ, Ռուզան Խաչատրեանը պատճառաբանեց մի քանի հանգամանքով. առաջինը, որ քաղաքական դէմքերի հետ շատ աւելի դժուար է շինծու գործի նախաքննութիւն անցկացնել՝ հաշուի առնելով անցեալի փորձը: Ռուզան Խաչատրեանը յիշեցնում է, որ այսօր կալանաւորուածներից շատերը նախկինում էլ են հետապնդուել: «Նրանց վախեցնելն ու համոզելը անհնար է, եւ երկրորդ՝ այսպիսով հոգեբանական խնդիր է լուծւում. շարքային ընդդիմադիրներին, քաղաքացիներին, որոնք կուսակցականներ չեն, պարզապէս քաղաքացիներ են եւ իրենց կարծիքն են արտայայտել՝ մասնակցելով հանրահաւաքներին, բացասական տրամադրուածութիւն են ուզում ստեղծել քաղաքական ուժերի եւ դէմքերի նկատմամբ»:*

*Ի դէպ, Ապրիլի 17-ին արդէն նշանակուած է «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէեանի դատավարութիւնը: Բայց այն կարող է յետաձգուել, որովհետեւ Ապրիլի 2-ից Մակէեանը հացադուլի մէջ է, իսկ առողջական վիճակը՝ վատ:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ ՑՈՅՑ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԴԻՄԱՑ




*Տեսարան մը կալանաւորուածներու հարազատներու ցոյցէն*

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Յետընտրական զարգացումների առնչութեամբ կալանաւորուածների հարազատները Ապրիլ 15-ի կէսօրից յետոյ բողոքի ցոյց են կազմակերպել Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան առջեւ՝ պահանջելով ազատ արձակել կալանաւորուածներին:*

*«Երեւան-Կենտրոն» քրէակատարողական հիմնարկում գտնուող նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանի կինը՝ Մելիսա Բրաունը «Ազատութիւն» ռադիօկայանին ասաց, որ Ազոյի խմբի այցելութիւնից յետոյ տեսակցութիւնները ամուսնու հետ թոյլատրուել են:*

*«Ուրբաթ օրը կը տեսնեմ: Թոյլ չեն տալիս անգլերէն խօսել ամուսնուս հետ, ստիպում են հայերէն խօսել, որ ամէն ինչ հասկանան», - ասաց Մելիսա Բրաունը:*

*«Առողջութեան համար վտանգաւոր են «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Յետընտրական զարգացումների առնչութեամբ կալանաւորուածների հարազատները Ապրիլ 15-ի կէսօրից յետոյ բողոքի ցոյց են կազմակերպել Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան առջեւ՝ պահանջելով ազատ արձակել կալանաւորուածներին:*

*Նոյն խցում է գտնւում պատգամաւոր Միասնիկ Մալխասեանը: Նրա կինը՝ Աննա Մալխասեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց. - «Տրամադրութիւնը մարտական է, յաղթողի տրամադրութիւն»:*

*Ազգային անվտանգութեան նախկին փոխնախարար Գուրգէն Եղիազարեանի կինը՝ Վարդուհի Եղիազարեանը յայտնեց, որ իր որդիները երկու անգամ այցելել են հօրը: «Նա պայքարելու է մինչեւ վերջ», - հաւատացած է կալանաւորուածի կինը:*

*«Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկում գտնուող պայմանները՝ սենեակներն ահաւոր նեղ են, դուրս չեն գնում, մաքուր օդ չեն շնչում», - յայտնեց նա՝ աւելացնելով, որ իր ամուսնուն չեն հարցաքննում. - «Մէկ ամսից աւելի ոչ մի գործողութիւն չեն անում»:*

*«Յաջորդ տեսակցութիւնը լինելու է Ապրիլի 18-ին՝ իմ ծննդեան օրը: Հաւատում եմ, որ այդ ժամանակ նա արդէն տանը կը լինի: Եթէ այդպէս չլինի, ես կը գնամ տեսակցութեան, եւ այնտեղ կը նշենք: Անհեթեթ եմ համարում բռնութիւններով մարդկանց բերանը փակելը: Միեւնոյն է՝ դա կոտրակուելու է եւ մի օր դուրս է գալու», - համոզուած է Սուրէն Սուրէնեանցի կինը:*

# «ԳԱԼԱ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵԹԵՐԱԶՐԿԵՑԻՆ

*Ապրիլ 16-ին ԳԱԼԱ հեռուստաընկերութիւն ներկայացան ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայութեան աշխատակիցները՝ ի կատար ածելու ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.04.2008թ-ի վճիռը, որը անփոփոխ էր թողել Շիրակի մարզի ընդհանուր իրաւասութեան դատարանի Փետրուարի 29-ի վճիռը, որով պարտադրւում է «ՋԱՊ» ՍՊԸ-ին ազատել «ԳԱԼԱ» հեռուստաընկերութեան հեռարձակող սարքաւորումները Գիւմրու քաղաքապետարանին պատկանող հեռուստաաշտարակի վրայից:*

*Ժամը 16:00-ից «ԳԱԼԱ» հեռուստաընկերութիւնը զրկուած է եթեր դուրս գալու հնարաւորութիւնից:*

*«ԳԱԼԱ» հեռուստաընկերութեան ժամանակաւոր եթերազրկումը Հայաստանում ստեղծուած լարուած ներքաղաքական իրավիճակի պայմաններում յղի է անկանխատեսելի զարգացումներով, մասնաւորապէս հանրապետութեան երկրորդ քաղաքում:*

*Ի յաւելումն տեղեկացնենք, որ հեռուստաաշտարակի վրայ գտնուող սարքաւորումները կարող են ապամոնտաժել միայն համապատասխան որակաւորում ունեցող մասնագէտները: Նման կարգի մասնագէտներ «ԳԱԼԱ» հեռուստաընկերութիւնը չունի, իսկ ԴԱՀԿ աշխատակիցները ներկայացել էին առանց այդ մասնագէտների:*

*«ԳԱԼԱ» հեռուստաընկերութեան հիմնադիր Վահան Խաչատրեանը առաջարկեց յետաձգել ապամոնտաժման գործողութիւնները, մինչեւ համապատասխան մասնագէտների այցելութիւնը, ինչին համաձայնութիւն չտուեցին ԴԱՀԿ ծառայութեան աշխատակիցները:*

*ԴԱՀԿ ծառայութեան աշխատակիցների հապճեպ գործողութիւնները հիմք են տալիս ենթադրելու, որ «ԳԱԼԱ» հեռուստաընկերութեան օր առաջ եթերազրկումը իշխանութիւնների համար օրակարգային թիւ մէկ խնդիր է մնում:*

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՔՆՆԱԴԱՏԵԼԸ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ ՉԷ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Եւրոպայի Խորհուրդի մարդու իրաւունքների յանձնակատար Թոմաս Համարբերգը Ապրիլ 14-ին հրաւիրուած ասուլիսում յայտնեց, որ չի կարող հայց առ հայց ասել, թէ Հայաստանում վերջին շրջանում ձերբակալուածներից ով է քաղբանտարկեալ, ով ոչ: Նա տեղեակ է, որ Հայաստանի դատախազութեան կողմից քրէական մեղադրանք է առաջադրուել կալանաւորուածներից շատերին, ինչը մեծ ռիսկեր է պարունակում այն առումով, որ կարող են մարդիկ ազատազրկուել իրենց քաղաքական հայեացքների համար:*

*Ըստ Նրա՝ անհրաժեշտ է խուսափել այն իրավիճակներից, «երբ մարդիկ դիտարկւում են որպէս պետութեան դաւաճաններ, թշնամիներ կամ նման մի բան միայն նրա համար, որ մասնակցել են հակակառավարական միտինգների կամ քննադատական խօսքեր են ասել կառավարութեան հասցէին»: «Սա հիմք չէ քրէական հետապնդման համար»,-ասաց յանձնակատարը՝ ընդգծելով, որ բոլոր նրանք, ովքեր ձերբակալուել են իրենց քաղաքական տեսակէտները յայտնելու համար, պէտք է ազատ արձակուեն: Պատասխանելով լրագրողների հարցերին՝ նա նաեւ նշեց, որ ինքը Հայաստանում էր Մարտի 1-ի դէպքերից անմիջապէս յետոյ եւ իր առաջարկներից մէկն էր իրականացնել անաչառ հետաքննութիւն՝ պարզելու, թէ ինչ տեղի ունեցաւ ընտրութիւններից յետոյ: Նրա գնահատմամբ՝ այսպիսի հետաքննութիւնը Հայաստանի կառավարութեան համար կը լինի վստահութիւնը ստուգելու կարեւոր փորձաքար: Այս պահին իրենք սպասում են Հայաստանի իշխանութիւնների պատասխանին: Նրա խօսքերով, եթէ որոշուի այդպիսի հետաքննութիւն անցկացնել, ապա իրենք պատրաստ են տրամադրել անկախ փորձագէտներ:*



ԵԽ-ի մարդու իրաւունքներու յանձնակատար Թոմաս Համարբերգ

*Իսկ ասուլիսից յետոյ ԵԽԽՎ դահլիճում Թոմաս Համարբերգը, պատասխանելով Հայաստանի պատուիրակութեան անդամ Աւետ Ադոնցի հարցին, նշեց, որ հիմա իրենք սպասում են ՀՀ կառավարութեան պատասխանին, որին մեկնել են օգնութեան ձեռք եւ յոյս ունեն, որ պատասխանը դրական կը լինի:*

*Յանձնակատարն այսօր ԵԽԽՎ-ում ներկայացնում էր մարդու իրաւունքների յանձնակատարի գործունէութեան մասին 2007թ տարեկան զեկոյցը:*

*«Կառավարութիւնները պէտք է յարգեն մարդու իրաւունքների մոնիտորինգի միջազգային մեխանիզմները»,- ընդգծել էր նա իր հաշուետուութեան մէջ: Ի դէպ, զեկոյցն առանձին-առանձին չի անդրադառնում երկրներին: Օրինակ՝ Հայաստանի մասով ասւում է, որ յանձնակատարը անցած տարի Հոկտեմբերին այցելել է Երեւան եւ որոշ առաջընթաց է նկատել՝ նախկինում արուած առաջարկների մասով:*

## ՍԱՄՈՒԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ՝ ՄԱՐՏ 1-Ի ԴԷՊՔԵՐԻ 10-ՐԴ ԶՈՀԸ

*Ապրիլ 14-ին Արարատի մարզի Եղեգնաւան գիւղում տեղի ունեցաւ Մարտի 1-ի դէպքերի 10-րդ զոհի՝ 29-ամեայ Սամուէլ Յարութիւնեանի յուղարկաւորութիւնը: Եղեգնաւանում այսօր դաժան տեսարան էր՝ 29-ամեայ երիտասարդին հրաժեշտ տալու էին եկել Արարատի մարզի տարբեր գիւղերից: Հարեւաններն ասում էին, որ տղան անճանաչելի է դարձել:*

*Մարտի 1-ի դէպքերից յետոյ 5 օր շարունակ ծնողները չեն իմացել իրենց որդու գտնուելու վայրը, որից յետոյ Սամուէլ Յարութիւնեանի անունը յայտնուել է ձերբակալուածների ցուցակում, սակայն հարազատները նաեւ պարզել են, որ նա ձերբակալուած չէ: Միայն Մարտի 5-ին նրանց զանգահարել են եւ ասել, որ տղան հիւանդանոցում է:*

## ՊԵՏՈՒԹԻՒՆՆ Է ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ

*Շարունակուածէջ 2-էն*

*քացիների ազատ կամարտայայտման վրայ, չի արտայայտում այդ քաղաքացիների ձգտումները, չի ծառայում այդ իտէալներին ու նպատակներին: Թքած այն պետութեան վրայ, որի համար անհատը բարձրագոյն արժէք չէ, նրա իրաւունքներն ու ազատութիւնները հիմնարար գաղափարներ չեն:*

*Թքած այն պետութեան վրայ, որի շահերը չեն ձեւաւորւում քաղաքացիների հաւաքական շահի պատկերացմամբ ու ընդգրկումով: Պետութիւնն է մարդու համար եւ ոչ թէ մարդը՝ պետութեան: Օրինականութիւնն է մարդու համար եւ ոչ թէ մարդը՝ օրինականութեան, կայունութիւնն է մարդու համար եւ ոչ թէ մարդը՝ կայունութեան: Եւ այն սերժանտները, որ այսօր ճամարտակում են պետութեան, օրինականութեան, կայունութեան մասին, ահա այդ մարդկանց ես ասում եմ. թքել եմ ձեր պետութեան, ձեր օրինականութեան եւ ձեր կայունութեան վրայ: Մեզ հարկաւոր է մարդակենտրոն պետութիւն, մեզ հարկաւոր է մարդակենտրոն օրինականութիւն, մեզ հարկաւոր է մարդակենտրոն կայունութիւն: Եւ մենք կ'ունենանք այն, ինչ հարկաւոր է Հայաստանի Հանրապետութեան ազատ քաղաքացիներին:*

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

## ՍԷՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԵԼ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ, ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

*ԵՐԵՒԱՆ, 14 ԱՊՐԻԼ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Սերժ Սարգսեանը՝ ղեկավարուելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 55-րդ յօդուածի 4-րդ կէտով՝ հրամանագրեր է ստորագրել Սէյրան Օհանեանին ՀՀ պաշտպանութեան, իսկ Էդուարդ Նալբանդեանին ՀՀ արտաքին գործերի նախարար նշանակելու մասին:*

*ՀՀ նախագահը, ղեկավարուելով ՀՀ Սահմանադրութեան 55-րդ յօդուածի 12-րդ կէտով եւ հիմք ընդունելով «Զինուորական ծառայութիւն անցնելու մասին» ՀՀ Սահմանադրութեան օրէնքի 52-րդ յօդուածի 1-ին մասի 1-ին կէտը, հրամանագիր է ստորագրել գեներալ-գնդապետ Սէյրան Օհանեանին ՀՀ Զինուած ուժերի Գլխաւոր շտաբի պետ-պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալի պաշտօնից եւ զինուորական ծառայութիւնից արձակելու մասին՝ վերջինիս զեկուցագրի համաձայն:*

*Ս.Սարգսեանի մէկ այլ հրամանագրով Էդուարդ Նալբանդեանն ազատուել է Ֆրանսիայի Հանրապետութիւնում, համատեղութեան կարգով՝ Սուրբ Աթոռում, Իսրայէլի Պետութիւնում եւ Անդորրայի Իշխանութիւնում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանի պարտականութիւններից:*

## ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ ԽԻՍՏ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵՑԻՆ

*Շարունակուածէջ 1-էն*

*Շուեդ պատգամաւորի խօսքով, այդ օրը ինքը վերադարձած է հիւրանոց, եւ նոյնիսկ չէ կարողացած քնանալ, իսկ յաջորդ առաւօտեան արդէն ասուլիսի ընթացքին հնչած է, թէ ընտրութիւնները անցած են միջազգային չափանիշներուն համապատասխան:*

*«Արդեօ՞ք այս կերպով մենք կ'օգնենք Հայաստանի ժողովուրդին», - հարց տուաւ Շուէտ պատգամաւորը ու ինքն ալ պատասխանեց. - «Ես կը կարծեմ, որ ոչ»:*

*Ան դրուագ մըն ալ յիշեց: Երբ Երեւանին մէջ ուզած է լուսանկարել Հայաստանի խորհրդարանի շէնքը, ոստիկանը արգիլած է՝ ըսելով, թէ այդ «գաղտնի հաստատութիւն է»: «Եթէ երկրի մը մէջ ժողովրդավարութեան ֆորումը՝ խորհրդարանը, գաղտնի հաստատութիւն է, ալ ի՞նչ ժողովրդավարութիւն»,-եզրափակեց իր խօսքը Մարիետա Դէ Պուրբէյ Լունդին:*

*Ժողովրդական կուսակցութեան անդամ, հունգարացի պատգամաւոր Նեմէթ Զոլտ իր ելոյթին մէջ յայտնեց, որ կ'ուզէ վիճարկել այն պնդումը, թէ Հայաստանի նախագահական ընտրութիւնները նկատուած են «հիմնականին մէջ միջազգային չափանիշներուն համապատասխան»: Ան շարք մը հարցումներ ուղղեց Ջոն Պրեսկոտին. - «Ձեզ յայտնի՞ է, որ այդ ազատ ընտրութիւններու արդիւնքով 9 զոհ կայ, ձեզ յայտնի՞ է, որ աւելի քան 100 քաղաքական բանտարկեալներ կան, որ արտակարգ դրութենէն յետոյ ընդունուած են օրէնքներ, որոնք կը սահմանափակեն ազատութիւնները, եւ այդ կատարուած է առանց Եւրախորհուրդի հետ խորհրդակցելու: Ձեզ յայտնի է, որ այդ ընտրութիւններէն յետոյ ընդդիմութիւնը օրինական չի նկատեր ընտրուած նախագահին եւ կը պահանջէ արտահերթ ընտրութիւններ»:*

*Հունգարացի պատգամաւորը ըսաւ, որ, անշուշտ, կասկածի տակ չառներ Պրեսկոտի բարեխղճութիւնը, այդուհանդերձ, կ'առաջարկէ քաղաքական որոշում:*

*Այդ նպատակով Ժողովրդական կուսակցութիւնը Հայաստանի իշխանութիւններուն կ'առաջարկէ անկախ հետաքննութիւն կատարել Մարտի 1-ի եւ 2-ի իրադարձութիւններու վերաբերեալ: Եւ այդ հետաքննութեան մասնակից դարձնել նաեւ ընդդիմադիրները:*

*«Եթէ հայաստանեան իշխանութիւնները այդպիսի հետաքննութիւն կատարելու պատրաստակամութիւն չյայտնեն, ապա Եւրոպայի Խորհուրդը եւ Խորհրդարանական Վեհաժողովը պէտք է կատարեն այդ հետաքննութիւնը», - ասաց Զոլտ ու աւելցուց, որ իրենց կուսակցութիւնը կ'առաջարկէ վերանայիլ ընտրութիւններու դիտարկման գործող մեքանիզմը. - «Այս մեքանիզմը շատ վտանգաւոր է: Մենք կը ժամանենք տուեալ երկիր, այնտեղ կը մնանք մի քանի օր, եւ նմանատիպ դիտարկման արդիւնքով Եւրոպայի Խորհուրդը կ'օրինականցնէ հակաժողովրդավարական ընտրութիւններու կատարումը»:*

*Ելոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի պատուիրակութեան անդամ Արմէն Ռուստամեան: Ան յայտնեց որ, հայաստանեան նախորդ նախագահական ընտրութիւններու նման, այս անգամ ալ ընտրութիւնները մարտահրաւէր էին երկրին՝ կազմակերպելու արդար եւ ազատ ընտրութիւններ: Ռուստամեան ընդգծեց ընտրութիւններու առնչութեամբ բարելաւումներու կարիքն ու անհրաժեշտութիւնը:*

*Հայաստանեան պատուիրակութեան միակ ընդդիմադիր անդամ Րաֆֆի Յովհաննիսեան եւս ելոյթ ունեցաւ եւ ընդգծեց, որ տեղի ունեցածի համար Հայաստան ոչ մէկուն չի մեղադրեր եւ ոչ ալ յատուկ մօտեցում կ'ակնկալէ, բայց ամէն պարագայի, նախագահական ընտրութիւններու առնչութեամբ զեկոյցին մէջ անհամապատասխանութիւն կայ եզրակացութիւններուն եւ բովանդակութեան միջեւ:*

*Հայաստանի ընտրութիւններուն մասին կարծիք յայտնեց նաեւ ատրպէյճանական պատուիրակութիւնը ներկայացնող Սամադ Սէիդով որ ըսաւ թէ, Հայաստանի մէջ ոչ թէ 8, այլ 27 զոհ եղած է:*

*Ապրիլ 17-ին ԵԽԽՎ-ի նիստին նախատեսուած է քննարկում Հայաստանի մէջ ժողովրդավարութեան վիճակի մասին:*

*Այս առթիւ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Ֆրանսայի Վարիչ Մարմինի նախաձեռնութեամբ եւ շարք մը կազմակերպութիւններու մասնակցութեամբ, նախատեսուած է ցոյց կազմակերպել ԵԽԽՎ-ի Ստրասբուրգի կեդրոնին առջեւ:*

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ**

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՌՈՒՍԱԿԱՆ «ՆՈՎԻԷ ԻԶՎԵՍՏԻԱ» ԹԵՐԹԻՆ ՀԵՏ

# «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆ 150 ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ»

*Ռուսական «Նովիէ Իզվեստիա» պարբերականը հարցազրոյց է ունեցել ՀՀ առաջին Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ, որը տպագրուել է որոշ կրճատումներով: Ստորեւ ներկայացնում ենք հարցազրոյցն ամբողջութեամբ:*



- Լեւոն Յակոբի, ինչպիսի՞ն է Ձեր գնահատականը մինչ նախագահական ընտրութիւնները եւ դրանից յետոյ Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերեալ:

***- Այն, ինչ տեղի ունեցաւ Հայաստանում փետրուարի 19-ին, հնարաւոր չէ անուանել ընտրութիւններ: Դա ժողովրդի կամքի նկատմամբ կոպիտ բռնութիւն էր: Այդ օրուան նախորդել են բերման ենթարկումները ոստիկանութիւն եւ իմ հազարաւոր կողմնակիցների ձերբակալութիւնները: Նրանց սպառնացել են, վախեցրել, որ չմասնակցեն իմ ընտրարշաւին: Իմ հանրահաւաքների ժամանակ իշխանութիւնների կողմից պրովոկացիաներ են կազմակերպուել, իշխանութիւններին ենթակայ հեռուստատեսային բոլոր ալիքներով տեղի է ունեցել նախընտրական քարոզարշաւի միակողմանի լուսաբանում, ժողովրդի աչքում իմ անձի հրէշաւորում: Ընտրութիւնների օրը նոյնպէս իմ 200 կողմնակիցներ, վստահուած անձինք, դիտորդներ ծեծի են ենթարկուել: Ամենասարսափելին տեղի է ունեցել ժամը 20-ից յետոյ, երբ ընտրատեղամասերը փակել էին ձայների հաշուարկի համար: Տեղի է ունեցել վստահուած անձանց զանգուածային վտարում եւ ընտրութիւնների արդիւնքների կեղծում: Դրան յաջորդեցին ԵԱՀԿ դիտորդների 2 զեկոյցներ: Յատկապէս խիստ էր երկրորդը: Դրանից հետեւում էր, որ ընտրութիւնները որպէս այդպիսին չեն եղել, եւ բնականաբար, մենք չէինք կարող ճանաչել դրանք: Դրան հետեւած բազմահազարանոց խաղաղ ցոյցերն ապացուցեցին, որ ժողովուրդը եւս դրանք չի ճանաչում: Այն օրը, երբ մեզ միացան Սերժ Սարգսեանի հանրահաւաքի մասնակիցները, ցուցարարների թիւը կազմում էր 300-ից 400 հազար մարդ, իսկ ակտիվ մասնակիցների նման թիւը արդէն իսկ ամբողջ ժողովուրդն է: Իշխանութիւնները գիտակցում էին, որ նման մթնոլորտում Սահմանադրական դատարանը կարող էր իրենց համար անընդունելի վճիռ կայացնել, եւ նրանք դիմեցին պրովոկացիայի. Ազատութեան հրապարակի հանրահաւաքը առաւօտեան ցրեցին: Դա մանրակրկիտ կերպով մշակուած ծրագիր էր, ընդհուպ մինչեւ խանութների թալանը եւ ցուցարարների գնդակահարութիւնը: Նրանց առիթ էր պէտք՝ դատարանի նիստն արտակարգ դրութեան պայմաններում անցկացնելու համար, եւ նրանք հասան դրան:***

- Ինչպիսի՞ն է իրավիճակն այսօր:

***- Առաջին հերթին, Հայաստանում հաշուււում է մօտ 150 քաղբանտարկեալ: Ես Եւրախորհրդի այլ երկիր չգիտեմ, ուր քաղբանտարկեալներ կան: Կալանքի տակ են գտնւում իմ գրեթէ բոլոր վստահուած անձինք, իմ շտաբների բոլոր ղեկավարները: Որոշ մարդիկ ստիպուած են թաքնուել: Աւելին, այն գիւղերում, որտեղ ես յաղթել եմ, աշխատանքից ազատւում են գիւղական աւագանիները: Աշխատանքից ազատւում են ընտրատեղամասերի նախագահները, որոնց տեղամասերում ես յաղթել եմ: Ամէն օր ոստիկանութիւն, ԱԱԾ են տարւում տասնեակ մարդիկ, ովքեր քաղաքացիական ակտիւութիւն են ցուցաբերել: Նրանց վախեցնում են, ազատում աշխատանքից, հարուածում նրանց բիզնեսին: Ապրիլի 9-ին միջազգային հանրութեան եւ, առաջին հերթին, եւրոպական կազմակերպութիւնների օրհնութեամբ Հայաստանը ձեռք բերեց բռնապետական, կրիմինալ ռեժիմ, որը, մեղմ ասած, չի վայելում ժողովրդի վստահութիւնը: Նոյնիսկ նրանք, ովքեր քուէարկել են Սերժ Սարգսեանի օգտին, այն ջարդից յետոյ, որը իրագործեցին իշխանութիւնները խաղաղ ցուցարարների դէմ, այժմ մեծամասամբ դէմ են նրան: Հասարակութեան կողմից ուժեղանալու է անհանդուրժողականութիւնը այս իշխանութիւնների նկատմամբ: Այսինքն, եթէ կ'ուզէք, դասական «գանդիզմ», քաղաքացիական անհնազանդութիւն, եւ մենք կանոնակարգելու ենք այդ տրամադրութիւնները: Այսինքն, եթէ հարցնէք, թէ ինչ եմ ես անելու, ես ձեզ կ'ասեմ՝ ես ձեւաւորելու եմ որոշակի հասարակական կարծիք, որ այս իշխանութիւնը չճանաչուի: Ինչ քաղաքական ձեւեր այն կ'ընդունի, ես այսօր չեմ կարող ասել, ինչ քաղաքական գործողութիւնների այն կը վերածուի, ցոյց կը տայ ժամանակը: Կ'ասեմ միայն, որ դրա համար օգտագործելու ենք օրինական բոլոր հնարաւոր միջոցները:***

- Ինչպէ՞ս էք գնահատում Հայաստանում կայացած ընտրութիւնների վերաբերեալ արեւմտեան կառոյցների արձագանքը:

***- Հայաստանը հանդիսանում է ԵԱՀԿ եւ Եւրախորհրդի անդամ, եւ նրա կառավարութիւնը որոշակի պարտաւորութիւններ ունի այդ կազմակերպութիւնների առջեւ: Դրա հետ մեկտեղ, գտնում եմ, որ այդ կազմակերպութիւնները, իրենց հերթին, պարտաւորութիւններ ունեն մեր ժողովրդի առջեւ: Այդ ժողովրդի իրաւունքների պաշտպանութիւնը, մարդու իրաւունքների, ժողովրդավարութեան զարգացման, երկրում օրինականութեան հաստատումը նրանց պարտաւորութիւնն է մեր ժողովրդի առաջ: Սակայն իրենց առջեւ Հայաստանի կառավարութեան պարտաւորութիւնների կատարումը պահանջելով՝ դրա հետ մեկտեղ իրենք մոռանում են մեր ժողովրդի առաջ իրենց ստանձնած պարտաւորութիւնների կատարման մասին: Հենց այստեղ է կայանում նրանց ձեւական մօտեցումը այն իրադարձութիւնների նկատմամբ, որոնք տեղի են ունենում Հայաստանում: Ինչ վերաբերում է ընտրութիւններին, սա առաջին անգամը չէ: Այդ կազմակերպութիւնների դիտորդները ժամանում են, ինչ-որ առաքելութիւն իրականացնում, վերադառնում եւ զեկուցում իրենց ղեկավարութեանը. նկատել ենք ինչ-որ թերութիւններ, տալիս ենք ինչ-որ խորհուրդներ, որպէսզի հետագայ ընտրութիւնների ժամանակ դրանք վերացուեն, բարելաւման յոյս ենք ունենում, օրէնսդրութեան մէջ նկատում ենք շատ դրական տեղաշարժեր եւ ժողովրդավարութիւնը խորացնելու իշխանութիւնների մտադրութիւն: Ի՞նչ եմ ես այդ ամէնի ետեւում տեսնում: Իր գոյութեան պատճառի արդարացում: Դրանք, ըստ էութեան, մաքուր բիւրոկրատական կազմակերպութիւններ են, ես նկատի ունեմ դրանց ապարատը: Ապարատը ունի իր գոյութեան տրամաբանութիւնը: Նրանք պէտք է ապացուցեն իրենց անհրաժեշտութիւնը, «ռեզոն-դետրեն»: Այնտեղ հաւաքուել են դիւանագիտական թոշակառուներ եւ երիտասարդ կարիերիստներ. նրանք չեն կարող ասել, որ իրենց համակարգման ներքոյ գտնուող երկրներից մէկում ամէն ինչ վատ է: Այդ դէպքում իրենց կը հարցնեն՝ իսկ ինչո՞վ էք դուք մինչ այժմ զբաղուել: Դա զգում են նաեւ Եւրոպայում, արդէն իսկ կան քննադատական նկատողութիւններ, դրա վերաբերեալ յօդուածներ: Եթէ նախկինում այդ կազմակերպութիւնների դէմ հանդէս էին գալիս հիմնականում կառավարութիւնները, ապա այժմ հանդէս է գալիս նաեւ հասարակայնութիւնը, ընդդիմութիւնը, ինչը նրանց համար առաւել վտանգաւոր է: Ե՛ւ Վրաստանում է այդպէս եղել, ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Ատրպէյճանում այդպիսի ձայներ կան: Այդ կազմակերպութիւնների գործողութիւններից դժգոհ են բոլորը: Նրանք ժամանում են, կազմում են խախտումների ցանկը, իսկ վերջում ասում են, թէ խախտումները չեն ազդել ընտրութիւնների արդիւնքների վրայ: Ես նրանց հարցնում եմ. եթէ հազարաւոր մարդիկ տարւում են ոստիկանական բաժանմունքներ, եթէ մարդկանց ծեծել են, ձերբակալել են, ընթանում է միակողմանի քարոզչութիւն, այդ ամէնը չի՞ ազդում ընտրութիւնների արդիւնքների վրայ: Այդ ամէնը նրանք նկարագրում են, իսկ վերջում այսպիսի անհեթեթ ձեւակերպում: Ես չեմ հասկանում, թէ ինչ է դա՝ տրամաբանութեան պակա՞ս, թէ՞ ինչ-որ անբարոյական բան... Գրում ես, որ տասնեակ վստահուած անձինք ձայների հաշուարկի ժամանակ վտարուել են, եւ դա չի ազդում ընտրութիւնների արդիւնքների վրայ: Կարծում եմ՝ վաղ թէ ուշ այդ կազմակերպութիւնները պէտք է վերակազմաւորուեն:***

- Ինչպէ՞ս էք տեսնում Հայաստան-ՆԱՏՕ փոխյարաբերութիւնները:

***- Դա չարչրկուած հարց է: Հայաստանի քաղաքական օրակարգում այդպիսի հարց գոյութիւն չունի: Իմ իշխանութեան օրօք այդպիսի հարց չի եղել, ոչ էլ Քոչարեանի: Եթէ այսօր Հայաստանի քաղաքական օրակարգում այդպիսի հարց չկայ, ապա դրա մասին խօսելն էլ իմաստ չունի: Ինչ վերաբերում է տարբեր ծրագրերի շրջանակներում ՆԱՏՕ-ի հետ յարաբերութիւններին, ապա այդպիսի յարաբերութիւններ կան բոլորի մօտ: Հենց նոյն Ռուսաստանի մօտ դրանք կան, նոյնիսկ, կարող է, աւելի սերտ, քան Հայաստանինը: Փաստ է, որ Հայաստանը գտնւում է ԱՊՀ անվտանգութեան համակարգում: Առայժմ Հայաստանին դա ձեռնտու է, եւ ես առիթ չեմ տեսնում Հայաստանը արհեստականօրէն հրել այլ կողմ: Առաւել եւս, որ նրան ոչ ոք չի հրաւիրում:***

- Ամէն դէպքում, Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հարցում ինչպէ՞ս կարելի է գոնէ նուազագոյն առաջընթացի հասնել:

- Տղաքս որոշեցին Ամերիկա երթալ, Օքլահօմայի համալսարանը ընդունուեցան, հոն բժշկութեան եւ էնճինիրինկի դպրոցները աւելի բարձր են եղեր: Նայինք... փորձենք... չեղաւնէ կու գան, Հայաստան կը ղրկեմ, հո՛ն մարդ կ՚ըլլան - կը պատճառաբանէր Յովակիմը հիմա կէս մը պարտուած ոճով իր բարեկամներուն, որոնք հայրենիքէն խապրիկ մը առնելու համար Ամմանի այս «կռունկ»ին միօրինակ երգը լսելո՞ւ կու գային, թէ... քանի մը ժամ մեռցնելու...: «Ով կարդալ սիրտը գիտէ...» պիտի ըսէր Վահան Թէքէեան:

***

Շաբաթներն ու ամիսները կը սահէին, սակայն Յովակիմի տղաները չէին վերադառնար:

- Ի՞նչ լուր տղաներէդ պարոն Յովակիմ:

- Դասերու մէջ խեղդուած են... Նայինք ամառը պիտի գան եղեր, ինչալլահ իրենց Հայաստան կը ղրկեմ, թող հայրենիք երթան ու հո՛ն մարդ ըլլան:

Յովակիմի տղաները տարին անգամ մը ամառնային արձակուրդին միայն կը վերադառնային Ամման, յաջորդ տարուան իրենց կրթաթոշակները ու ծախսերը ապահովելու համար:

Ամէն անցնող տարուան հետ, Յովակիմի մէջ բան մը կը փլէր: Իր երազներէն, իր համոզումներէն քար մը կ՚իյնար հոգւոյն խորը, որուն ցաւը ինք գիտէր միայն ու չէր կրնար ուրիշ մը վշտակից ընել իր ցաւին:

Հեռաւո՜ր Ամերիկան հեռաձայնի թելի միւս ծայրն էր հիմա իրեն համար, այնքան մօտ... երբ կը խօսէր իր զաւակներուն հետ:

Իսկ Հայաստա՞նը...

Անցան տարիներ... ու Յովակիմի զաւակները աւարտեցին համալսարանը:

- Աչքդ լոյս պարոն Յովակիմ... տղաներդ աւարտած են եղեր:

- Շնորհակալ եմ... տարոսը ձեր զաւակներուն:

- Հայտէ, վաղը տղաքդ կու գան, աղուոր հայ աղջիկ մըն ալ կ՚առնես իրենց համար, տուն տեղ կ՚ըլլան, թոռնիկներ ալ կ՚ունենաս...

- Աստուած մեծ է, քոյրիկս... հէլէ մէյ մը խէրով բարով թող գան, լաւ գործ մը գտնան, յետոյ ալլա քէրիմ - կը պատասխանէր Յովակիմ միշտ թախծոտ աչքերով:

Ու առտու մըն ալ կտոր մը ճերմակ թուղթ առնելով, Յովակիմ ազդարարութիւն մը փակցուց դեղարանին դուռին վրայ:

- Ի՞նչ է պարոն Յովակիմ, Ամերիկա՞ կ՚երթաս կոր...

- Ի՞նչ ընեմ, տղաքս չեն գար կոր: Այնտեղ լաւ գործ գտած են... ինծի ըսին որ ես գնամ: Տասը օրուայ համար կնոջս հետ որոշեցինք երթալ:

Ամէն մէկ հարցում փամփուշտի մը նման՝ կը ծակէր հիմա սիրտը Յովակիմին: Ինք որ Ամերիկան տարիներով ատած էր ու ատոր դէմ ինչե՜ր խօսած բոլորին: Իսկ հիմա Ամերիկա պիտի երթար, ուր իրեն համար սեւերու ու ճերմակներու պայքար ալ կար միշտ:

Երկա՜ր ճամբորդութիւնը առիթ կ՚ընծայէր սակայն իրեն՝ իր վէրքերը ամոքելու, այն յոյսով որ գուցէ համոզէր տղաներուն, որ տարին մը Ամման վերադառնան ու այնտեղ յարմար լաւ հայ աղջիկ մը կնութեան առնեն ու գոնէ հայ բոյն մը կազմեն... թէկուզ սա նիհլէթ Ամերիկայի մէջ:

Ահա այսպիսի երազներով ու ինքզինք մխիթարելու փորձերով էր, որ տասնօրեայ պտոյտը կը սկսէր Յովակիմին:

***

- Տաս օրը ի՞նչ է որ պարոն Յովակիմ, մարդ Աստուծոյ աշխարհի միւս ծայրը գացեր ես... գոնէ զաւակներդ քիչ մը աւելի վայելէին:

- Ձէ՛, բաւ էր... ամէն ինչ բաւ էր...

Է՜ պատմէ նայինք ինչպէ՞ս տեսար սա Ամերիկան:

- Իմ տեղս հո՛ս է... ես անիկա գիտեմ...-, չոր ու ցամաք իր պատասխանները կասկած կը յարուցանէին յաճախորդներուն մօտ, որ Յովակիմը վշտացած էր աս Ամերիկայէն:

Արդարեւ... քանի մը օրէն արդէն լուր տարածուած էր քաղաքին մէջ որ Յովակիմը մինակ վերադարձած էր Ամերիկայէն ու իր կինն ու աղջիկը ետեւ թողած:

- Մարդը «կրին քարտ» առնելու համար գնաց Ամերիկա, ասոնք վաղը հո՛ն կը տեղափոխուին: Հո՛ս կը ծախեն ամէն ինչ, ու կը մեկնին:

Ժողովուրդին բերանը նիւթ դարձած էր հիմա Յովակիմը:

Ո՛չ ոք գիտէր իր ցաւը, որ լո՜ւռ կը կոտտար հիմա իր կուրծքին տակ, մինչեւ որ առտու մը դէպի դեղարան իր ճամբուն վրայ գետին ինկաւ... շաքարի հիւանդութեան յանկարծական բարձրացումին պատճառաւ:

Շտապ օգնութեան մարդիկը զինք հասցուցին հիւանդանոց:

Լուրը կայծակնային արագութեամբ տարածուեցաւ քաղաքին մէջ:

- Լսեցի՞ր... դեղագործ Յովակիմը ճամբան ինկեր է... զաւալլըն Ամերիկա գնաց... կինը եւ աղջիկը չվերադարձան... խեղճ մարդը մինակը հիւանդանոց պառկեր է հիմա:

Երեկոյեան, Յովակիմի մտե-

Շար.ը էջ 19

GENERAL CONTRACTOR

BID REQUEST

Qualified Construction Material Testing firms are invited to submit combined Statements of Qualifications and Proposals by 5:00 PM, May 15, 2008 for Project Number E08-16, Taxiway "A" Material Testing, to provide construction testing and construction inspection for the Taxiway A Reconstruction project at the Bob Hope Airport. This project will be financed using a combination of Airport and federal funds. This project includes milling out approximately 4 inches of existing asphalt pavement and replacing it with FAA Specification P-401 Bituminous Surface Course as modified a by the Authority and approved by the FAA on Taxiway "A", removal and replacement of existing asphalt pavement of various taxiway shoulders, crack sealing and sealcoating various areas of the taxiway shoulders, installation of taxiway centerline lighting conduit and cans on Taxiway "A" and relocation of the existing asphalt service road south of Taxiway "C". Disadvantage Business Enterprise participation is strongly encouraged. A Request for Qualifications/Proposal package can be obtained directly from the Bob Hope Airport Web site at bobhopeairport.com under Business Opportunities. All Proposers shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Proposals submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A pre-proposal conference will be conducted on April 24, 2008 at 10:00 AM at the Burbank Airport Engineering Office, 2800 N. Clybourn, Second Floor, Burbank, California.

GENERAL CONTRACTOR

BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E08-11, Module 10.4 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, May 22, 2008. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: thirteen single family homes (13), a fifteen unit apartment complex (15), a three unit apartment (3) and a two 2 unit apartment complexes (4) for a total of thirty-five units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Two Pre-bid conferences have been scheduled for May 1, 2008 and May 7, 2008, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California. Attendance at one or the other conference is Mandatory.

ՅՈՒՇԵՐ

# ՓՐԿԱՐԱՐ ՀԱՅԸ

*Ռ. ԿՈՐԻՒՆ*
*(Շարունակուած «Մասիս»ի նախորդ թիւէն)*

*Այն րոպէից որ Արտեմը թողել էր տունը կացութիւնը չթէժացնելու նպատակով, Ռիման շարունակել էր անիմաստ հոգեկան յուզումը միսմենակ խոհանոցում՝ փակ դռան ետեւը, աթոռին նստած, մերթ ընդ մերթ ոտքի էր կանգնում, սուրճ էր պատրաստում եւ պատուհանից դուրս էր նայում, նա իր ջղային դրութիւնը մեղմացնելու նպատակով մի քանի անգամ սուրճի էր դիմել:*

*Նա մենախօսութեամբ էր դրսեւորում սրտի վրդովմունքը մէկ բարդոյթից անցնելով միւսին, ոնց Շիրվանզադէի՝ «Հրդեհ նաւթագործարանում», որտեղ բոցը նաւթակաթսայից նաւթակաթսայ էր փոխանցւում մինչեւ ինքնաբերաբար մարելը: Նրա բոցավառուելու պատճառը ընկերուհին էր դարձել՝ սին հպարտութեան եւ ցուցամոլութեան հետեւանքով:*

*Յանցաւորը Ռիման էր, որ անընդունակ էր եղել հարցին տրամաբանօրէն մօտենալու, կարճամիտ էր գտնուել եւ թոյլ էր տուել, ընտանեկան կեանքը ալեկոծուի: Ընտանեկան անհանգստութիւնների դրդապատճառը լինում է որոշ անգիտակից կանանց կողմից՝ իրենց գոռոզութեան, չար նախանձի եւ յուեռեսութեան պատճառով: Նրանք ամուսնու դերը չէզոքացնելով եւ արժեզրկելով երեխաների մօտ տան ղեկը իրենց ձեռքում առնելով կարծում են ճիշտ գործ են անում: Այդ որոշ կանայք առաւելաբար զգացումային են մօտենում, քան թէ՝ բանականութեամբ եւ տրամաբանութեամբ: Տնեցիների խաղաղ ու երջանիկ կեանքը կնոջ վարքից եւ ամուսնու հետ վարուելակերպից կախում ունի: Ջենք ասում բոլոր տղամարդիկ սուրբ են, նրանց մէջ եւս գտնւում են անպատասխանատու մէկերը անտեղեակ հայ ընտանիքի դրուածքի օրէնքներից:*

*Ռիման ասան կնոջ նման այնքան ինքնիրեն ասեց մինչեւ յոգնեց, մէկ էլ ժամացոյցին նայեց, տեսաւ, կէս գիշեր է, մտածեց, թէ.*

*- Ինչո՞ւ Արտեմը չերեւաց:*

*Կամացուկ խոհանոցից դուրս դէպի ննջասենեակ գնաց ստուգելու համար, գուցէ Արտեմը թաքուն ներս մտած լինի, բայց այնտեղ չէր, սկսեց մտահոգուել: Անկողին մտաւ քնելու համար, սակայն անհնարին էր այդ վիճակում: Ուզեց կենտրոնանալ եւ մի ելք գտնել այս դրութիւնից դուրս գալու, սակայն անկարող եղաւ, Արտեմն էր գալիս իր աչքի առջեւ՝ տխուր ու անհանգիստ:*

*-Աննախադէպ էր, Արտեմը այս ժամին տանը չլինէր, մտածեց նա:*

*Ռիմային պատեց վախ ու անդոհ:*

*Հոգեփոխութիւն նկատուեց նրա մօտ:*

*Մտածմունքի մէջ ինքն իրեն փնթփնթալ սկսեց.*

*-Էս ի՞նչ արեցի, ինչո՞ւ իմ էրիկին ցաւ ու վիշտ պատճառեցի, եւ էդ ի՞նչ պահանջ էր ես դրի: Ինչո՞ւ, ինչո՞ւ էլիզաբեթի ասածները լսեցի, ամօթ ինձ որ նոր չգամ նրա պէս յիմարին հետ ընկերութիւն անեմ եւ իմ քաղցր կեանքս սեւացնեմ: Թող քոռանամ, թող հողը մտնեմ, որ իմ ազիզ մարդին տնից դուրս չհանէի: Տէ՛ր Աստուած, ի՞նչ անեմ, ա՛խ, իմ Արտեմը, իմ հաւատարիմ ու ազնիւ Արտեմը ո՞ւր մնաց, չլինի դէպք պատահած լինի, թող լեզուս լալուի, կը գայ նա անպայման, անկարելի է նա ինձ թողնի մենակ, նա միշտ ինձ սիրել է: Ա՛խ, ես եմ եղել նրան նեղացնողը, նրան ջղայնացնողը: Անգամներ ծնողների համար անտեղի կռուել եմ եւ տօնական օրերը լեղի եմ դարձրել: Ո՞ւր ես Արտեմ ջա՛ն, եթէ չգաս, կսկիծից կը մեռնեմ, եթէ չգաս, էս անուշ բալէքիդ ի՞նչ անեմ, ոնց պահեմ..Չէ՛, չէ՛, դու կը գաս, անպայման կը գաս՝ իմ յենարանն ու պաշտպանը:*

*Ռիման զղջացել էր իր արածի վրայ, ոնց մեղաւորը եկեղեցի է գնում մեղքերը խոստովանելու համար: Նա դադար չունէր, մէկ ժամացոյցին էր նայում, մէկ խոհանոց էր գնում, մէկ պատուհանից դուրսը ստուգում, մէկ մուտքի դռան էր մօտենում ականջ դնում, անյոյս ետ էր դառնում ննջարան, մազերն էր քրքրում, ծունկերն էր ճմրում: Չէր իմանում ինչ անէր, էս ժամին ուր գնար, ում դիմէր: Քայլերը մէկ ուղղեց դէպի Արտեմի ծնողի սենեակը նրանց իմաց տալու, նրանց օգնութեան դիմելու, բայց հրաժարուեց մտածելով.*

*-Նրանք մեղք են, նրանք ծեր են եւ շատ փխրասիրտ , դժուար թէ դիմանան, եթէ իմանան Արտեմը տնից հեռացել է, վա՜յ, ինչ կը լինի նրանց օրը, չէ՛, չէ՛ աւելի լաւ է թողնենք այսպէս մինչեւ լուսանայ:*

*Ռիման լաւապէս կարողացաւ այս տագնապալից վիճակում զգօնութիւնը պահել եւ Արտեմի ծնողին չտեղեկացնել, սակայն շարժուեց դէպի հեռախօսը եւ ուզեց իր ծնողին զանգել եւ եղելութիւնը յայտնել, նրանց հետ խորհրդակցել, մէկ կանգ առաւ եւ կենտրոնացաւ խորհրդածելով.*

*-Չէ՛, նրանց էլ պէտք չէ իմաց տալ, նրանք էլ անքնութեան եւ տագնապի կը մատնուեն:*

*Ռիման նրանցից էլ վազ անցաւ, որոշեց յոյսը դնել Աստծու վրայ եւ սպասել մինչեւ լուսանայ, առաւօտ լինի, յետոյ դիմելու իր հարազատների աջակցութեան, ապա գլուխը կախ մտածմունքի մէջ քայլեց դէպի բալէքի ննջարանը, նրանք մուշ - մուշ քունի մէջ էին, խոնարհուեց նրանց կառաւաթին, չկարողացաւ իր արցունքները զսպել, նրանք լուռ ու մունջ թափուեցին աչքերից, թոյլ չտուեց հեկեկոցի, նա երեխաների կառաւաթի մօտ կուչ եկած ընկղմուեց մտքերի մէջ:*

***

*Երեք շտապ օգնութեան ամպուլանսները շուտափոյթ իրենց հասցրին հիւանդանոց: Պատգարակներով նրանց փոխադրեցին վերականգնողական բաժանմունքը: Բոլորի գոյները գաչի պէս սպիտակ եւ մեռելի պէս երկնցած մարմիններով, անմիջապէս թթուածինի կապսիւլները միացրին եւ բժիշկների խիստ հսկողութեան ներքոյ առնուեցին, մահու եւ կեանքի հարց էր, այն էլ ոչ մէկ հոգի, այլ՝ վեց հոգի, մէկ ընտանիքի ողջ անդամները: Բժիշկ, բուժքոյր եւ հիւանդապահ բոլորը ի մի էին հաւաքուել փրկելու նրանց կեանքը, ամէն մէկը մի բժշկական գործի էր լծուած, րոպէ առ րոպէ զեկուցելով բժշկապետին եւ խորհուրդներ ստանալով: Ոստիկաններից մէկը գտնւում էր հիւանդների մօտ, նա մօտիկից հսկում էր կացութիւնը, նկատելով բժշկական խմբի անվերապահ նուիրումը մօտեցաւ մեծ բժշկին ասելով.*

*-Նախ գնահատում եմ ձեր բժշկական խումբը, որ ամենայն խղճմտանքով նուիրուած էք նրանց փրկարար աշխատանքին, ապա խնդրում եմ տեղեկացնել նրանց վիճակից, արդեօ՞ք կեանքի յոյս կայ.*

*-Անյոյս մարդը մեռած է, ասում են՝ յոյս ոչ ամաչեցուցանէ, եւ դրա համար հիւանդանոցի կազմը իր ճիգն ու ջանքը չի խնայում նրանց կեանքի կոչելու, այդ փրկարար հայ երիտասարդը, եթէ հինգ րոպէ ուշ էր հասել մէկ ընտանիք արդէն իսկ կորած էր:*

*Ոստիկանն արդէն որոշ չափով կռահեց, որ նրանց ողջ մնալու յոյսը չի մարել, դրա համար ուրախ էր, ուստի ինք եւս սպասողական վիճակում հետեւեց բարի ոգիների ազատարար արարքներին:*

*Միւս պատասխանատու ոստիկանը Արտեմի հետ ներքնայարկի սպասասրահումն էին գտնւում: Չի կարելի երեւակայել Արտեմի հոգեկան տագնապալից վիճակը, տեղում դադար չունէր, շարունակ ոտքի վրայ քայլում էր հայեացքը չփախցնելով աստիճաններից եւ վերելակից, աչքը նրանց ճամբին էր, մերթ ընդ մերթ աչքերը դէպի վերեւ ուղղած օգնութեան աղերսներ էր մրմնջում.*

*-Աստուած իմ, Օգնութեան հասիր նրանց: Նրանց փրկութիւնը իմ փրկութիւնն է, թող կեանքին վերադառնան, եթէ նրանց մի բան պատահի, ի՞նչ կը լինի իմ վիճակը, դէպքը յիշելիս տեւաբար մտածմունքից կը տանջուեմ եւ կը հալուեմ, բարի հոգիներ հասէք, նրանց փրկէք, ազատէք, խնդրում եմ, աղաչում եմ- Էս ինչ էր որ պատահեց ինձ, միթէ՞ իմ մեղքերիս համար է էս տառապանքը, մի՛ թող նրանք մահանան Աստուած իմ պաշտելի, յոյսս քո վրայ է:*

*Ոստիկանը այն ինչ որ տեսել էր եւ այն ինչ որ Արտեմը պատմել էր բոլորը գրի էր առել, պատրաստել էր ժամանակաւորապէս մի զեկուցագիր եւ պահանջեց՝ Արտեմը ստորագրի: Արտեմը ուշադիր կարդաց զեկուցագիրը նկատելով որ իր հասցէին մեղադրանք է ներկայացուած որպէս թէ՝ Արտեմը գողութեան մտադրութեամբ առաւօտեան ժամը մէկին մտել է այդ շէնքը- Արտեմը բողոքեց եւ կտրուկօրէն մերժեց թուղթը ստորագրել ասելով.*

*-Այն ինչ գրուած է, սխալ է, ես գողութեան նպատակ չեմ ունեցել, ես կը սպասեմ մինչեւ նրանց վիճակը պարզուի:*

*Ոստիկանը չառարկեց, բայց նկատի առնելով հիւանդների վիճակը առ ի ապահովութիւն Արտեմի դաստակներին ձեռնակապանքներ անցկացրեց եւ սպասեցին, տեսնեն, ճակատագիրը ինչ տնօրէնութիւն է կատարում:*

*Աշխարհը մթնեց Արտեմի աչքերում, երբեք այսպէս ձեռքերը կապանքուած վիճակում չէր գտնուել նա:*

*-Ի՞նչ փորձանք է գալու իմ գլխին, միթէ՞ ես յանցանք եմ գործել, որ արգելակում են իմ ազատութիւնը, ես պիտի բողոքեմ, ես պիտի ընդվզեմ ոստիկանի այս որոշման դէմ, նա մտածեց եւ խստացած դիմեց ոստիկանին.*

*-Պրն. ոստիկա՛ն, ինչո՞ւ այս վերաբերմունքը, ինչո՞ւ իմ ձեռքերը կապեցիք, ո՞ր անօրէնութեանս համար, սխալ գործ եմ արե՞լ, մարդկային կեանքեր ազատելու համար այդ տունը մտել, խնդրում եմ վերատեսութեան ենթարկել ձեր որոշումը եւ ձեռքերս ազատ արձակէք.*

*-Քո ձեռքերդ այսպէս կը մնան, մինչեւ հիւանդների վիճակը պարզուի, դու առանց թոյլ տւութեան նրանց տուն ես մտել եւ յայտնուել ես այդ տեսարանի դէմ յանդիման, եթէ քո փոխարէն մի վախկոտ եւ անձնասէր մէկը լինէր, հէնց այդ դրութեան մէջ կը թողնէր եւ կը փախչէր, բայց դու արդարեւ այնքան մարդասէր ես գտնուել, որ քո ներքին սիրողական ձայնը մղել է այս քաջագործութեան, մէկ խօսքով դու վտանգել ես քո անձը ուրիշին փրկելու համար, այս նկատի կառնուի, սակայն օրէնքի տեսակէտից այլ բնոյթ է ներկայացնում, առայժմս աղօթենք առ Աստուած նրանց առողջութեան համար: Պրն. Արտեմ քո ազատութիւնը կախուած է նրանց առողջութիւնից: Սպասենք առանց յոյսներս կտրելով:*

*Արտեմը ունկնդրելով ոստիկանի տրամաբանուած արտայայտութիւնը իրեն բաւարարուած զգաց եւ լաւապէս ընբռնեց օրէնքի խստութիւնը ուրիշի տուն մտնելու պարագային, ուստի շատ չհետապնդեց իր մտադրածը յոյս ունենալով նրանց առողջանալու վրայ, քանի որ նրանց մարմինը բակ փոխադրելու ժամանակ ականջ էր դրել նրանց կրծքին եւ լսել էր սրտի թոյլ բաբախում, այդուհանդերձ ճգնաժամը մնում էր ճգնաժամ սպասողական դրութեան մէջ:*

*(Շարունակելի 5)*

## ԿՈՉ ՕԳՆՈՒԹԵԱՆ



**Ես ԿԱՐՕ ԹՈՔԱԹԼԵԱՆ, 64 տարեկան, ամիսներէ ի վեր կը տառապիմ Leukemia-է (արեան քաղցկեղ): Ցաղթելու համար այս հիւանդութեան, պէտք ունիմ որոշ տեսակի՝ ինծի յարմարող արիւնի: Եթէ յարմարող արիւնը գտնուի, տուող ենթական ոչ մէկ վտանգ կամ դժուարութիւն պիտի չունենայ. պարզապէս՝ յատուկ գործողութեամբ մը, մէկ թեւէն առնուած արիւնը, միւս թեւէն իրեն ետ պիտի ներարկուի: 18 տարեկանէն վար եղողները չեն կրնար օգնել ինծի: Կրնաք ինծի հեռախօսել հետեւեալ թիւով՝ (818) 415-4661: Հանեցէք օգնել ինծի, այլապէս կրնայ շատ ուշ ըլլալ:**

**Կանխայայտ շնորհակալութեամբ՝**

**ԿԱՐՕ ԹՈՔԱԹԼԵԱՆ**

## ԶՈՒՀԱՃԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԳԱԽԱՂԸ՝ ԶԷՄԻՐԷ-Ն

*Շարունակուած էջ 13-էն*

*ցանկին մէջ առնել:*

*Բերալի Ֆրանսական Թատրոն-ին բեմին վրայ Տիկ. Պէնամիի գլխաւորութեամբ ներկայացուած Զէմիրէ-ն կ'արձանագրէ մեծ յաջողութիւն: Երաժշտական քննադատներ այս առիթով կը գրեն. «ազդեցիկ էր», «դիւթիչ էր», «հրաշակերտ մըն էր», «համակ օրօրում մ'է սիրահեղ պարերգը...»: Օփերան ուշադրութիւն գրաւած է երաժշտական ձեւի գեղարուեստական աւարտուածութեամբ եւ հարստութեամբ: Իսկապէս տարբեր էր հեղինակի թէ՛ պատմական մեծակերտ Արշակ Բ-էն, եւ թէ՛ միւս կատակերգական օփերէթներէն: Այս մէկը գրուած էր ռոմանտիկական թեքումով եւ բանաստեղծականացած երանգներով: Նիւթը՝ արաբական հէքիաթ մըն էր, որ տեղի կ'ունենար Արաբիայի (Հիջազի) մէջ:*

*Զէմիրէ-ի մէջ տիրապետողը քնարական կերպարներն ու տրամադրութիւններն են՝ կապուած Զէմիրէի եւ Էլզանթուրի հետ: Հերոսն ու հերոսուհին հարուստ ցեղապետերու միակ զաւակներն են, որոնք դիպուածաբար մեծ մոգ Էպուտիայի կախարդած առուակին մօտ իրարու կը հանդիպին: Ասոնց կը հակադրուի Աթալմուքի (Էլզանթուրի ծառային) զաւեշտական կերպարը: Օփերային մէջ մեծ տեղ տրուած է երեւակայական-կախարդական (արտառոց) երեւոյթներու. փերիներ, ոգիներ, կախարդուած բնութիւն, վերապրուկներ, մոգ, եւայլն, որոնք առատօրէն գործածուած են որպէս կերպարային եւ գեղարուեստական զարդարանք:*

*Այս քնարական, կատակերգական, դրամատիկական եւ երեւակայական տուեալներէն մեկնելով՝ Զուհաճեանը իր օփերան որակած է «կիսալուրջ» (semi-seria): Բազմաթիւ են այս տիպի գործերը մասնաւորաբար ԺԹ դարու առաջին կիսուն, եւ ասոնց սկզբնօրինակն է Մոցարտի Կախարդական Սրինգ-ը:*

*Յամենայնդէպս Զէմիրէ-ի երաժշտական կերպարայնութիւնը կը յատկանշուի իր քնարական շունչով, ռոմանսային մեներգներով, վառ զուգերգներով, եւ արտայայտիչ ու պաշտօնառական անսամբլային գրութեամբ: Մինչ երկախօսութիւնները գրառուած են ասերգային արտաբերումով, սիրահարներու մեղեդիական արտայայտութիւնները յագեցած են զգացական գեղումներով, իսկ Աթալմուքի զաւեշտական արագախօսութիւնը, պարային աշխոյժ տեմպերով գրուած շատ մը բաժինները, դիւային անսամբլներու սահմռկեցուցիչ նուագական ելեւէջումները բոլորը միասին կ'օժանդակեն օփերային քնարատրամատիկական բնաւորութեան: Հրաշալի պատկերուած են բնութեան եւ ֆանտաստիկ տեսարաններու երաժշտական նկարագրութիւնները, փոթորիկներ, սարսափազդու տեսարաններ ներկայացուած են տինամիկ զօրաւոր հակադրութիւններով. սրինգներն ու լարային նուագարանները յաջողապէս օգտագործուած են կայծակներու փայփլոցները դրսեւորելու, եւայլն:*

*Երաժշտագրութեան բազմաթիւ հնարանքներու տիրական գործածութեան հետ, Զուհաճեանի երաժշտական լեզուն կը յատկանշուի նաեւ արեւելեան երաժշտութեան յատուկ հնչողութեամբ եւ Արեւելքին յատուկ ելեւէջներու օգտագործմամբ, քովն ի վեր ֆրանսական քնարական օփերաներէ առնուած ձայնային երանգներուն:*

*Դժուար է նշել թէ Զուհաճեանի օփերէթներէն ո՞ր մէկն է զուտ ազգայինը, ո՞րը համաարեւելեան բնոյթի, կամ ո՞րը եւրոպական: Կարելի է ընդհանրապէս հաստատել թէ երաժշտականօրէն այդ բոլոր տարրերն ալ կան Զուհաճեանի ժառանգութեան մէջ գեղագիտական հմուտ միահիւսմամբ: Եւ այդ պարճառով Զուհաճեան սիրելի է տարբեր ազգերու երաժշտասէրներուն: Թէեւ ան իր ամբողջ խառնուածքով, հոգեբանութեամբ եւ ձգտումներով հայ արուեստագէտ է:*

*Զէմիրէ օփերան պէտք է որ իր արժանի տեղը գտնէ հայ երաժշտական կարեւոր գործերու շարքին: Կ'ակնկալենք Հայաստանի Սպենդիարեանի անուան Օբերային Պետական Թատրոնէն որ նաեւ Հայրենիքէն ներս վերականգնէ եւ արժէքաւորէ մոռացութեան մատնուած այս գործը: Վստահաբար մեծ գոհունակութիւն պիտի առթէ այդ թէ՛ արուեստագէտներու եւ թէ՛ ունկնդիրներու մօտ իր սուր ու հետաքրքրական նիւթով, խայտաբղէտ եւ վառ կերպարներով, տրամադիկ իրադարձութիւններով, վերին աստիճանի արտայայտիչ եւ ախորժալուր երաժշտութեամբ:*

*Տիգրան Զուհաճեանը մեր ազգային երաժշտութեան գագաթներէն մէկն է, եւ անոր հարուստ ժառանգութիւնը պէտք է իրեն արժանի վերաբերմունքի արժանանայ մեր երաժշտական տարեգրութեան մէջ:*

*2003-ին եւ 2004-ին Լոս Անճելըսի մէջ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Լարք Երաժշտական Ընկերակցութեան միասնական ուժերով ներկայացուած Զուհաճեանի երկու օփերաները կախարդեցին հազարաւոր հանդիսատեսները, Սաթամեան «Արտաւազդ»-ով եւ Պարսումեան «Լարք»-ով փայլատակեցին: Մեծ խանդավառութեամբ եւ կատարողական մեծ կազմով այս տարի դարձեալ կը ներկայանան հանրութեան, ներկայացնելու Զէմիրէ դիւթական օփերան:*

*Առիթը մի՛ փախցնէք. արձանագրեցէ՛ք այս թուականները. Մայիս 30, 31, եւ Յունիս 1, 2008: Վայրը՝ Pasadena Civic Auditorium:*

**Օգտագործուած աղբիւրներ.**

- Ալիխանեան, Նուպար Յ.: «Տիգրան Չուխաճեան, իր կեանքն ու Արուեստը»: Թէոդիկ Ամենուն Տարեցոյցը: 1926, 20րդ տարի: Վենետիկ, Ս. Ղազար, Տպ. Մխիթարեան, 1926: էջ 454-466:
- Աւագեան, Հայկ: «Զէմիրէ Օփերան, Պատմական Ակնարկ»: Արեւ Օրաթերթ, Գահիրէ, Յունիս 16, 1992, թիւ 22082 - 7 Յուլիս 1992, թիւ 22098: Եւ լրացումներով՝ Ծիծեռնակ, Ապրիլ, 2007, Եգիպտոս: էջ 3-16:
- Պէշիկթաշլեան, Նշան: «Տիգրան Չուխաճեան», Թատերական Դէմքեր: Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ թիւ 4: Անթիլիաս, Լիբանան, Տպ. կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1969: էջ 79-136:

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*գակատուններով որ աւարտեցաւ 1976 թուականին, եւ որուն օծումը Վազգէն կաթողիկոս կատարեց նոյն տարին ի ներկայութեան եկեղեցւոյ նորոգութեան բարերարներուն՝ լոնտոնաբնակ Քիւրքճեան Գէորգ եւ Ճոն եղբայրներուն: Իսկ Բիւրականի «Հայկաշէն» ամառանոցի յատակագիծի հեղինակը դարձեալ Ռաֆայէլ Իսրայէլեանը եղաւ որուն 1969 թուի պատրաստած նախագիծը գործադրուեցաւ 1974ին, կառուցուելով այդ լայնանիստ, երեքյարկանի եւ չքամուտքի անկիւնին բարձրադիր գմբէթով հայրապետական ամառանոցը, որուն բարերարը եղաւ ամերիկահայ թեմի նահապետը՝ Հայկ Գավուքճեան: Վեհափառ Հայրապետը ի պատիւ բարերարին զայն կոչեց «Հայկաշէն»: Վարազդատ Յարութիւնեանի գնահատումով, Ռաֆայէլ Իսրայէլեան «շնորհաշատ եւ հայաշունչ իր բազմաթիւ ու բազմապիսի գործերով դրսեւորեց իրեն որպէս ինքնատիպ, քարի երաժշտութեան անկրկնելի վարպետ»:*

*Թէեւ ճարտարապետ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՀԻՆԵԱՆ Մայր Աթոռի ճարտարապետներու յանձնախումբին մաս չէր կազմեր, սակայն իր անփոխարինելի դերը ունեցաւ Վաղարշապատի պեղումներու աշխատանքներուն մէջ, յատկապէս Ս. Հռիփսիմէ տաճարի պեղում- ներուս ժամանակ յայտնաբերելով «որ տաճարի կառուցման ժամանակ նրա հիմքերում տեղադրուել են հին Վաղարշապատի անտիկ շէնքերին պատկանող մեծաչափ ու քանդա- կազարդ բեկորներ»:*

*Ճարտարապետ եւ գիրքերու հեղինակ Ալեքսանդր Սահինեան ծնած է 1910ին Ստեփանաւանի Վարդաբլուր գիւղը, եւ 1930ին ընդունուած Երեւանի շինարարական հիմնարկի ճարտարապետութեան բաժինէն, զոր աւարտած է 1937ին ու աշխատանքի անցած «Հայպետնախագիծ» ուսումնական բարձրագոյն հաստատութեան մէջ: Շուրջ 35 տարիներու իր հետազօտութեանց որպէս արդիւնք, Սահինեան հրատարակած է 50-է աւելի հրատարակութիւններ, որոնցմէ յայտնի են «Քասաղի Տաճարի Ճարտարապետութիւնը» մեծադիր հատորը, 1955-ին լոյս տեսած, եւ «Ակնարկ Հայ Ճարտարապետութեան Պատմութեան»՝ 1964-ին:*

*Ըստ Վարազդատ Յարութիւնեանի գնահատումին, Սահինեան ընթացաւ մեծանուն ճարտարապետ Թորոս Թորամանեանի ուղիէն որպէս «գիտական մեծ բարեխղճութեամբ» աշխատող մտաւորական ճարտարապետ, որ իր անգերազանցելի աշխատանքի բաժինը բերաւ նաեւ Գառնիի աւերակներու պեղումներուն ու այդ հեթանոսական տաճարի վերականգնումի հսկայական աշխատանքներուն մէջ, «որին նա ջանադիր նուիրեց իր կեանքի շուրջ տասը տարիները»: Գառնիի տաճարը «իր փառայեղ տեսքով իրաւամբ հանդիսացաւ Ալեքսանդր Սահինեանի գիտական սխրանքը», ինչպէս կը վկայէ Վարազդատ Յարութիւնեան: Սահինեան մահացաւ 1982-ին:*

*Մայր Աթոռին երեսունհինգ տարիներ իր տաղանդաւոր աշխատանքը ի սպաս դրաւ ճարտարապետ ԱՐԾՐՈՒՆ ԳԱԼԻԿԵԱՆ, ծնած Վան 1912 թուականին: Երեք տարեկանին գաղթական դուրս եկաւ իր ծննդավայրէն ու հաստատուեցաւ Երեւան: 1931-ին Երեւանի պետական համալսարանի շինարարական եւ ճարտարապետական բաժիններու մէջ ուսանելէ ետք, յաջողութեամբ աւարտեց իր մասնագիտութիւնը 1937-ին, եւ ապա աշխատեցաւ Երեւանի եւ Մոսկուայի ճարտարապետական արուեստանոցներուն մէջ: Համաշխարհային Բ. պատերազմի դառն օրերուն, Գալիկեան զօրակոչուեցաւ, գերմանական ճամբար փոխադրուեցաւ, ճաշակելով բոլոր դառնութիւնները, մնալով հիւծուած եւ ուժասպառ:*

*Պատերազմէն ետք Հայաստան վերադարձին դարձեալ հալածուեցաւ, «հայրենիքի դաւաճան» ստայօդ պիտակով, ու տասը տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ «հեռաւոր աքսորավայրերու մէջ»: Աքսորէն Երեւան վերադառնալով 1957-ին, Գալիկեան, ճարտարապետ եւ իր ուսուցիչ Միքայէլ Մազմանեանի միջնորդութեամբ, ճարտարապետի պաշտօնով աշխատանքի անցաւ Մայր Աթոռ՝ Վազգէն Ա. Հայրապետի հրաւէրով: Արծրուն Գալիկեան իր կեանքի մնացեալ 35 տարիները, գոնէ մինչեւ 1992, լայնածաւալ գործունէութիւն ցոյց տուաւ ճարտարապետական հսկայական իրագործումներով թէ՛ Մայր Աթոռէն ներս, եւ թէ՛ Հայաստանի տարածքին: «Նրա անունը կապուած է շատ կարեւոր իրագործումների հետ՝ Ս. Էջմիածնի Հին եւ Նոր Վեհարանների հիմնական վերանորոգման ու բարեզարդման» աշխատանքներուն հետ, որոնց կողքին Գալիկեան պատրաստեց նախագիծը մայրավանքի Ղազարապատի նորոգութեան եւ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցւոյ հիմնական վերակառուցման:*

*Ա. Գալիկեանի տաղանդին արդիւնքը եղան նաեւ Ս. Էջմիածնի վանքին հիւսիս-արեւելեան կողմի ժամացոյցի աշտարակը, Երեմեան միաբանական շէնքի վերակառուցումը, Ս. Գայեանէի վանքին արտաքին կառոյցները, Շողակաթի եկեղեցւոյն հիմնական վերանորոգումը, Էջմիածին քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնական վերանորոգումը, Նորագաւիթի Ս. Գէորգ եկեղեցւոյ վերանորոգութիւնը, ինչպէս նաեւ Արմաւիրի շրջանի Ս. Աստուածածին, Հրազդանի Ս. Խաչ, Վարդենիսի Ս. Աստուածածին եկեղեցիներու նորոգութեանց նախագիծերը, եւ վերջապէս Արարատեան թեմի առաջնորդարանի շէնքին նախագիծի պատրաստութիւնը եւ կառուցումը, ինչպէս նաեւ Գէորգեան Ճեմարանի շէնքին վերանորոգման նախագիծը: Ակնառու է նաեւ ճարտարապետ Գալիկեանի հնարամիտ Երեւանի տարածուն, երեքթեւեան ությարկանի քաղցկեղի հիւանդութեանց (օնգոլոճիք) հսկայ հիմնարկը, իր կեդրոնի գիտական հետազօտական ու վարչական յարկաբաժիններով, ուրկէ երեք ուղղութեամբ կը տարածուին հիւանդանոցի յարկերը, նախագծուած ու կառուցուած 1967-1970 տարիներուն:*

*Իր այս բոլոր շնորհակալ գործերը իրագործուած են իր կենդանութեան, երբ կը նշուէր իր ծննդեան 80-ամեակը՝ Վազգէն Ա. Հայրապետի օրհնութեամբ, որ իր 1992 սեպտեմբեր 10 թուակիր Օրհնութեան Գիրով «Ջերմապէս կը գնահատէր իր երեսունհինգ երկար տարիներու անկոտրում կամքով» իրագործած շինարարական աշխատանքը:*

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԳԱՒԱԹԻ ՄՐՑԱՇԱՐՔ

*Ֆուտբոլի Հայաստանի գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչում կայացան պատասխան հանդիպումները:*

| | | |
|---|---|---|
| *«Գանձասար» - «Փիւնիկ»* | *0-0 (1-4)* | *(առաջին հանդիպում 0-0)* |
| *«Բանանց» - «Շիրակ»* | *0-1 (8-7)* | *(առաջին հանդիպում 1-0)* |
| *«Կիլիկիա» - «Միկա»* | *1-2* | *(առաջին հանդիպում 0-1)* |
| *«Ուլիս» - «Արարատ»* | *0-2* | *(առաջին հանդիպում 1-0)* |

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ՓԵՔԻՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿԻ 4 ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՈՎ

*Ապրիլի 13-ին Յունաստանի մայրաքաղաք Աթէնքում աւարտուեց բռնցքամարտի միջազգային օլիմպիական վարկանիշային վերջին մրցաշարը:*

*Հայաստանի 5 պատուիրակներից ոչ մէկին չյաջողուեց վարկանիշային եռեակ մտնել: Այսպիսով, Հայաստանը Փեքինի օլիմպիական խաղեր կը գործուղի 4 բռնցքամարտիկի՝ Յովհաննէս Դանիէլեանին (48 կգ, Երեւան), Հրաչեայ Ջաւախեանին (60 կգ, Վանաձոր), Էդուարդ Համբարձումեանին (64 կգ, Երեւան) եւ Անդրանիկ Յակոբեանին (75 կգ, Էջմիածին):*

### ՇԱԽՄԱՏ
### Վ. ՅԱԿՈԲԵԱՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱԽՈՅԵԱՆ

*Հայաստանի գրոսմայստեր Վլադիմիր Յակոբեանը նուաճել է ախոյեանի կոչումը Դագոմիսում աւարտուած Ռուսաստանի շախմատի ակումբային առաջնութիւնում: Նա հանդէս է եկել Եկատերինբուրգի «Ուրալ» թիմի կազմում: Գրոսմայստեր Սերգեյ Մովսիսեանը՝ Սլովակիայից, Սանկտ Պետերբուրգի «ՖԻՆԵԿ» թիմի կազմում նուաճել է արծաթէ մեդալ:*

*Վլադիմիր Յակոբեանը Եւրոպայի շախմատի գաւաթի մրցաշարում ներկայացնելու է Երեւանի «Բանկերի արքայ» թիմը:*

### ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ

*ՍԵՒԱԿ ՇԷՆԵԱՆ ԵՒ ԷՄԻԼԻԱ ԷՋՈՒՐԵԱՆ*
*13 Ապրիլ, 2008 Փասատինա*

*Այս ուրախ առիթով մեր ջերմ շնորհաւորանքները ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար մեր պաշտօնակից «Նոր Կեանք» շաբաթաթերթի տնօրէն՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արշօ Շէնեանին:*

*«Մասիս»*

### ՏՕՔԹ. ՑՈԼԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԸ

*Ուրախութեամբ կ'իմանանք թէ Տօքթ. Ցոլակ Գազանճեան վերջերս վկայուած է նաեւ որպէս ասեղնաբոյժ (accupuncture): Որպէս քայրօբրաքթըր մասնագիտացած ըլլալով, այսուհետեւ պիտի գործէ իր տիրապետած զոյգ մասնագիտութիւններով:*

*Մեր շնորհաւորութիւնները երիտասարդ բժիշկին եւ ծնողներուն՝ շաբաթաթերթիս պատասխանատու խմբագրին՝ եւ Տիկնոջ՝ Տօքթ. եւ Տիկ. Արշակ եւ Վարդուհի Գազանճեաններուն:*


**ԲԱՑՈՒԱԾ Է**

**Հիպնոսաբուժութեան կեդրոն**
**ղեկավարութեամբ՝**
**Փորձառու բժիշկ Արթին Սաղըեանի**
**Փասատինայի մէջ**
**Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն**
**մինչեւ կ.ե. ժամը 3:00**
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**
**Pasadena CA 91104**
**Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ**

«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.
-Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան գերճնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալքոլ, թմրադեղեր, եւայլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անքնութիւն, եւայլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:
- Ուսումնական եւ սպորթային բարելաւում


### ԹԵՔՈՒԱՆԴՕ
### ԱՐՄԱՆ ԵՐԵՄԵԱՆԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ



*Հռոմում կայացած թեքուանդոյի Եւրոպայի առաջնութիւնում Հայաստանի ներկայացուցիչ Արման Երեմեանը մինչեւ 78 կգ քաշայիններ պայքարում դարձել է Եւրոպայի ախոյեան:*

*Մինչեւ եզրափակիչ հասնելը հայ մարզիկը յաղթել է Մոլդովայի, Իռլանդիայի, Բելառուսի եւ Գերմանիայի ներկայացուցիչներին: Եզրափակիչում Երեմեանի մրցակիցն է եղել Սպանիայի ներկայացուցիչ Նիկոլաս Գարսիան, որին յաղթելով էլ Հայաստանի ներկայացուցիչը արժանացել է ոսկէ մեդալների: Մինչեւ 67 քաշային կարգում Լեւոն Փաշաբեզեանը հենց առաջին փուլում զիջել է հոլանդացի Դենիս Բեկերսին:*

*Մինչեւ 72 քաշային կարգում Գրիգոր Վարդանեանը եւս պայքարը թողել է առաջին փուլում՝ պարտուելով Իսրայէլի ներկայացուցիչ Եոնի Բեն Ահարոնին:*


**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...**

**Մեծ Ժողովրդականութիւն Վայելող**
**Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը**
**Այժմ Կը Սփռուի**
**GlobeCast**
**Արբանեակային Հեռատեսիլով**
**Ամերիկայի, Գանատայի Եւ Մեքսիքոյի**
**Ամբողջ Տարածքին**
**Դուք Կրնաք Դիտել**
**Հայաստանեան Լուրեր**
**Քաղաքական Վերլուծութիւններ**
**Երաժշտական Հաղորդումներ**

**Մանրամասնութիւններու Համար**
**Հեռաձայնել 818.547.9696**



**ՔԱՋ ՆԱԶԱՐ**
**ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի 280-րդ կայանից
GlobeCast Արբանեակային Հեռատեսիլ



**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**
**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**
**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**
**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**
**GLOABCAST SATELLITE**
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00



**Հայ Թելեժամը Կը Վերադառնայ**
**18ը Ալիքի Վրայ**
Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը
**Շաբաթը 7 օր անվճար**
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982-2400

# ՄԱՀԱԶԴ



ԱՆԺԷԼ ԱՍԱՏՐԵԱՆ ՀԵՔԻՄԵԱՆ

*Սրտի դաւն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ թանկագին կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ, եւ հարազատին՝* ***ԱՆԺԷԼ ԱՍԱՏՐԵԱՆ ՀԵՔԻՄԵԱՆ****ի մահը որ պատահեցաւ Ապրիլ 11-ին, յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ Ապրիլ 16ին, Զորքեշաբթի, կէսօրուան ժամը 12:00ին, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, որմէ անմիջապէս ետք թաղումը՝ Պըրպանքի* Forest Lawn Hollywood Hills *գերեզմանատունը:*

*Սգակիրներ՝*

*Ամուսինը՝ Յովսէփ Ասատրեան*

*Որդին՝ Ալիկ Ասատրեան, զաւակներով*

*Դուստրերը՝ (ընտանիքներով) Սամուէլ եւ Մարինէթ Ալաջաջեան, Ոսկեբերան եւ Կարինէ Ղազարեան, Տօքթ. Յակոբ եւ Դիանա Ալաջաջեան, քոյրը՝ Յակոբ եւ Արփինէ Նահապետեան՝ զաւակներով:*

*Ալիս Հեքիմեան՝ զաւակներով*

*Սոնա Ասատրեան՝ զաւակներով*

*Ինչպէս նաեւ Ասատրեան, Հեքիմեան, Ալաջաջեան, Ղազարեան, Սանոսեան, Նահապետեան, Եսայեան, Թերզեան, Ջամբազեան, Ջափարեան, Գրիգորեան, Ջաղլասեան ընտանիքներ:*

*Հանգուցեալ Անժել Հեքիմեանի եօթնօրեան եւ քառասունքը տեղի կ'ունենան Ապրիլ 20ին, ժամը 11-ին, շիրիմի մօտ, որմէ ետք հոգեճաշ կը մատուցուի* Sebastian Collection *ռեստորանում (Նախկին՝ Մոնթրոզ),* 2833 Honolulu Blvd., La Crescneta:

*Անժել Ասատրեան-Հեքիմեանի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

# ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

***ԱՆԺԷԼ ԱՍԱՏՐԵԱՆ ՀԵՔԻՄԵԱՆ****ի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ամուսնոյն՝ Յովսէփ Ասատրեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:*

# ՅՈՎԱԿԻՄԸ

*Շարունակուածէջ 7-էն*

*ըիմները այցելութիւն մը տուին իրեն:*

*- Անցած ըլլայ, պարոն Յովակիմ, ի՞նչ պատահեցաւ... զարմացած հարց կու տային իր ընկերները:*

*Բոյժ քոյրը վերահաստ ըլլալով հարցադրումին... խնդրեց որ հիւանդը հանգիստ թողուն, քանի ի վիճակի չէր խօսելու անգամ:*

*Աւելի ուշ... Յովակիմ իր մէջ ուժ գտնելով աչքերը բացաւ... տեսաւ իր մտերիմները սնարին շուրջ... գլուխը շարժեց, կարծես բարեւ մը ըսելու համար... ապա աչքերը բացաւ... անկիւն մը, սառած մնաց պահ մը:*

*- Անցած ըլլայ, պարոն Յովակիմ, ի՞նչ պատահեցաւ... լռութիւնը խզելու համար, զարմացած հարց տուաւ մտերիմներէն մէկը:*

*- ...*

*- Խօսի՛ր Յովակիմ... բան մը ըսէ, կինդ, զաւակներդ լուր ունի՞ն, կ'ուզե՞ս հեռաձայն մը ընենք... թող զան շուտով... մէջ մտաւ ուրիշ ընկեր մը:*

*- ...*

*- Ի՞նչպէս ինկար Յովակիմ... շաքարի պատմութի՞ւնդ էր թէ ոչ... միջամտեց երրորդ այցելուն:*

*Յովակիմ ակնարկ մը նետեց իր այցելուներուն վրայ ու գլխու շարժումով մը հաստատեց վերջինին գուշակութիւնը:*

*- Հէլէ միտքէս անցաւ... ըսի ձեզի որ նեղութենէն կ'երեւի մարդուն շաքարը վեր ելաւ:*

*- Ամերիկա գացիր, տղաքդ տեսար... ուրախացար... մաշալլահ համալսարան ալ աւարտեցին, մարդ եղան... ի՞նչ կայ նեղանալու... կը խորհրդածէր հիմա ընկերներէն մին:*

*Յովակիմ լուռ կը մնար իր մէջ կոտտացող ցաւին հետ:*

*Ի՞նչ պիտի պատմէր ընկերներուն... ինչպէ՞ս պիտի պատմէր... ի՞նչ երեսով պիտի ըսէր, որ իր անդրանիկ որդին իրմէ 25 տարի մեծ՝ չորս զաւակներով ամերիկացի կնոջ մը հետ ամուսնացած էր, կառավարական պսակ եղած, եւ հիմա օտարին զաւակները իրեն կրէնք կը կանչէին:*

*Ի՞նչպէս պիտի պատմէր, որ տարիներու իր երազը խորտակուած էր հոգւոյն մէջ... չէ՞ որ տղաները մա՛րդ պիտի ըլլային օր մը, հայկական ջերմիկ բոյն մը պիտի կազմէին, թէկուզ սա նէհլէթ Ամերիկային մէջ:*

*Ինչպէ՞ս պիտի պատմէր որ Հայաստանի երազն անգամ չէր կրցած դրոշմել իր զաւակներուն սրտին մէջ:*

*Ինչպէ՞ս պիտի պատմէր, որ զաւակներուն կիսատ-պռատ խօսած ոսկեղնիկն անգամ՝ հիմա փոխարինուած էր անգլերէն լեզուով:*

*Ինչպէ՞ս պիտի պատմէր, որ իր «Միրանի ծառ»ը չորցած էր օտար հողին վրայ:*

*Ցաւե՜ր... որոնք ամէն օր քիչ մը աւելի կը ճնշէին հայկականութեամբ տոգորուն իր սրտին վրայ:*

*Ու քանի մը օր ետք... Յովակիմի կինը վերադարձաւ Ամերիկայէն, հոգ տանելու իր կողակիցին:*

*Բայց... արդէն ուշ էր:*


# Palm Springs

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |



*Մանրամասների համար հեռաձայնել՝*

**(818) 246-0125**








**Massis Weekly on the Internet**
**massisweekly.com**
**Updated every Friday**



**Merrill Lynch**

*INVESTMENT BANKING*

**JACK KALANJIAN**

*Professional Financial Advisor*

Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
**(626) 396-2825 Direct**
**(626) 376-4665 Fax**
**jack_kalanjian@ml.com**

**"Helping the Armenian Community Build Wealth"**

AGBU

LARK MUSICAL SOCIETY




A New Production by

**AGBU ARDAVAZT THEATER COMPANY
AND
LARK MUSICAL SOCIETY**

Dikran Tchouhadjian

# ZEMIRÉ

*Opera Semiseria in Four Acts*

Stage Director:
**KRIKOR SATAMIAN**

Music Director:
**VATSCHE BARSOUMIAN**

A large cast of singers, actors, chorus, orchestra and supernumeraries.

Friday
May 30, 2008, 8:00 pm
Saturday
May 31, 2008, 8:00 pm
Sunday
June 1, 2008, 3:30 pm

Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA